

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ՄԵՆԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ



ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2021

[Կ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր Ի]

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՏԻԳՐԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՓԻՆԵ ՄԵԽԱԿԻ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ԿԻՐԱՌԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)

1108042

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2021



ՀՏԴ 658
ԳՄԴ 65.290
Հ 422

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ:

Մասնագիտական խմբագիր՝ տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Ռ.Ն. Մարինյան

Հարությունյան Տ., Կյուրեղյան Ա.

Հ 422

Գործարար միջավայրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները
Հայաստանի Հանրապետությունում (կիրառական դիտարկումներ)/
Տ. Հարությունյան, Ա. Կյուրեղյան, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ, - Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
հրատ., 2021, - 136 էջ:

Գրքում ներկայացվել են գործարար միջավայրի կառավարման սոցիալ-
տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գոր-
ծարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային
համակարգով, այլև մակրոտնտեսական ցուցանիշների ունեցած ազդեցու-
թյամբ: Ըստ այդմ իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն և հիմնավոր-
վել դրանց ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա՝ նպաստելով
գործարար ակտիվության բարձրացմանը:

Աշխատության մեջ առաջադրված հիմնահարցերն ու առաջադրվող լու-
ծումները կարող են օգտակար լինել կազմակերպությունների, գործարար
աշխարհի ներկայացուցիչների, տնտեսագետ-հետազոտողների, ասպի-
րանտների և մասնագիտական բուհերի ուսանողների համար:

ՀՏԴ 658
ԳՄԴ 65.290

ISBN 978-9939-9260-1-8

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ 1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

- 1.1. Գործարար միջավայրի կառուցվածքն ու բնութագրող տարրերը..... 7
- 1.2. Գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնային վերլուծությունն արտերկրում և տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում..... 27

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

- 2.1. Գործարար միջավայրի կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմները ՀՀ-ում..... 40
- 2.2. ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացներում ինստիտուցիոնալ բարեփոխումները գործարար միջավայրի համատեքստում..... 50

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- 3.1. Տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմները 60

3.2. Տնտեսական զարգացման առաջնահերթությունների համակարգման մեխանիզմները մակրոտնտեսական ցուցանիշների համատեքստում	72
3.3. Տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման գերակայությունները ՀՀ-ում. հազուստի արտադրության ոլորտի օրինակով	90
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ...	107
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	114
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	125

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման գործում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում: Նկատենք, որ գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն անխուսափելի գործընթաց է, ինչը ենթադրում է տնտեսության բոլոր հատվածներում գործող տնտեսական մեխանիզմների ու լծակների վերանայում: ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործում կարևորում ենք տնտեսության ոլորտներում իրականացվող տնտեսական մեխանիզմների վերանայումը, և առավելությունների սահմանումն այն ոլորտների համար, որոնք ապահովում են բարձր ավելացված արժեք, արտահանման դիվերսիֆիկացում և ներմուծման փոխարինում: Նոր մեխանիզմները կարող է նվազեցնել ՀՀ-ում ստվերային բիզնեսը, մասնավորապես իրականացնել կազմակերպությունների ֆորմալացում ինչպես փոքր, այնպես էլ միջին և խոշոր, այդ թվում նաև՝ աշխատուժի, շրջանառության և հարկերի առումով: Նշենք նաև, որ դեռևս գոյություն ունեն այսպես կոչված «պետական կառավարման մարմինների և բիզնեսի սերտաճման» խնդիրներ, որոնց պատճառով Հայաստանում ըստ էության տեղի չի ունենում գործարար միջավայրի բարելավում, հաճախ բախվում են օրինական հարկ վճարողների և «պետական հովանավորչական» հարկ վճարողների բիզնես շահերը, որի արդյունքում կորչում է օրինական դաշտում գործող տնտեսվարող սուբյեկտների մոտիվացիան: Այդ առումով հետազոտություննան մեջ իրականացվել է գործոնային վերլուծություն՝ ներառելով երկու հիմնական խնդիր՝

1. ցույց տալ գործարար միջավայրի վրա ազդող գործոնները,
2. թե այդ գործոններն ինչպե՞ս կարող են ազդել բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Ինչպես օտարազգի, այնպես էլ հայազգի բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են գործարար միջավայրի բարելավմանը, կապված հարկային և այլ գործոնների հետ: Այս մենագրությունը նպատակ ունի ցույց տալու, թե դրանք ինչ ազդեցություն են ունենում կամ ունենալու բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի զարգացման, կենսամակարդակի բարձրացման, պետության խնդիրների լուծման վրա:

Հարկ է նկատել, որ գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային համակարգով, այլև մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշներով, որոնք ուղղակի և անմիջական ազդեցություն են ունենում արտահանման և ներմուծման ծավալների դինամիկայի, տրանսֆերտների, վարկային տոկոսադրույքների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության աստիճանի, իրավական համակարգի, ներդրողների շահերի պաշտպանվածության վրա: Աշխատանքում իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, որի միջոցով հիմնավորվել է յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա՝ նպաստելով գործարար ակտիվության բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 1. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵՐՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. Գործարար միջավայրի կառուցվածքն ու բնութագրող տարրերը

Գործարար միջավայրը յուրաքանչյուր երկրի տնտեսական և սոցիալական կայունության հիմնական երաշխիքն է, որի զարգացումը հնարավորություն է տալիս մեղմելու անցումային տնտեսություններին բնորոշ տնտեսական և սոցիալական դժվարությունները՝ կայուն պայմաններ հետագա տնտեսական աճի համար, հետևաբար՝ տվյալ երկրի կյանքի որակի բարելավում:

«Գործարար միջավայր» հասկացության վերաբերյալ տրվել են տարբեր սահմանումներ, որոնց բովանդակությունն, ընդհանուր առմամբ համընկնում է¹, թեև երբեմն այն նույնացվում է «գործարար» կամ «ձեռներեցություն» հասկացությունների հետ: «Գործարար միջավայրն» իր ընդգրկումների մեջ լայն հասկացություն է²: Օրինակ, ըստ Ֆիլ Քելիի, գործարար միջավայրը բոլոր պայմանների, իրադարձությունների ամբողջությունն է, որոնք շրջապատում և ազդում են վերջինիս վրա³: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ գործարար միջավայրը գործարարությանն առնչվող այն ամենն է, ինչն ազդում է տվյալ գործունեության վրա⁴: Համաձայն մեկ այլ կարծիքի՝

¹ Дергунов А. Системный подход развитию национальной инновационной среды. Инновации N3.2008, 53-56 с.

² Դրամբյան Ա. Բիզնես միջավայրի կառուցվածքն ու դրա վրա ազդող գործոնները, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #6 հունիս(168), 2014, Երևան, 56 էջ:

³ Phil Kelly and Ashwin “The Business Environment”, 2013, pp. 78-81.

⁴ CEA. Business studies: Assessment Unit3. 2009.p. 54.

տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար գործարար միջավայրը տնտեսական, սոցիալական, քաղաքական կամ ինստիտուցիոնալ պայմանների ամբողջություն⁵ է: Այլ դիտարկումներով գործարար միջավայրը ինստիտուցիոնալ, քաղաքական և կարգավորող պայմաններն են, որոնց շրջանակներում գործում է առևտրային կազմակերպությունը⁶, կամ այն գործոնների համախումբ է, որը պետության կողմից ապահովում է գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմաններով⁷, իսկ Յ. Մալումանի կարծիքով գործարար միջավայրը ներքին և արտաքին գործոնների փոխազդեցության արդյունքում գործարարների ձեռնարկատիրական ունակությունների դրսևորման վարքագիծն է, որը հետագայում կարող է խթանել ներդրումային հոսքերի, նոր աշխատատեղերի, հարկային եկամուտների ավելացումն ու նպաստել տնտեսության զարգացմանը⁸:

Նկատենք, որ գործարար միջավայրի ուսումնասիրությամբ ներգրավված են միջազգային տարբեր կառույցներ: Մասնավորապես, ըստ Համաշխարհային բանկի, գործարար միջավայրը գործոնների համախումբ է, որը բնութագրում է տվյալ երկրի առևտրային կազմակերպությունների գործարարությամբ զբաղվելու մոտիվացիան արդյունավետ ներդրումային քաղաքականության, նոր աշխատատեղերի ստեղծման, համաշխարհային մրցակցային շուկաներին ինտեգրման արդյունում⁹:

Ընդհանրացնելով գոյություն ունեցող սահմանումներն ու ձևակերպումները՝ գործարար միջավայրը կարելի է բնութագրել որպես ներքին և արտաքին գործոնների փոխազդեցու-

⁵ Fernando A.C. “Business Environment”, Pearson Education, 2011, pp. 33-36.

⁶ Dollar D. Hallwart-Driemier M. Mengistae T. “Investment Climate and Firms Performance in the Development Economies”. World Bank, 2003, pp. 118-120.

⁷ Inter-American Development bank, 2003 p.75.


⁸ Saloman Johan “Economics and the Business Environment”, 2008, pp.126-128.

⁹ Всемирный Банк, “Доклад о мировом развитии”, 2005, с. 9-11.

թյան հետևանքով տնտեսվարող սուբյեկտի գործարար ունակությունը կարգավորող գործընթաց, որի նպատակը նվազագույն ռեսուրսներով առավելագույն շահույթի ապահովումն է: Այն գործարարների տնտեսական, ձեռնարկատիրական, իրավական, սոցիալական, մշակութային արժեքները համակարգող գործընթաց է:

Գործարար միջավայրի վերլուծությունը նպատակ ունի ուսումնասիրելու ձեռնարկության արտաքին և ներքին միջավայրերի գործոնները, ինչպես միկրո, այնպես էլ մակրո մակարդակներում: Դրանց հիման վրա բացահայտվում են ձեռնարկության գործունեության արդյունավետության բարձրացման հնարավորությունները, ինչպես նաև ձեռնարկատիրական ռիսկերը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ կազմակերպության հետագա զարգացման վրա: Կազմակերպության գործարար միջավայրի վերլուծության հիմնական ոլորտներն են արտաքին և ներքին միջավայրի վերլուծությունը, ինչպես նաև շուկայական դիրքի ամրապնդման, կազմակերպության արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան միջոցառումների մշակումը:

Ասվածն առավել պատկերավոր ներկայացված է ներքոհիշյալ գծապատկեր 1.1.1-ում:



Գծապատկեր 1.1.1. Գործարար միջավայրի կառուցվածքի բնութագիրը միկրոմակարդակում¹⁰

¹⁰ Կազմվել է հեղինակների կողմից:

Ինչպես ակներև է, գործարար միջավայրը բավականին լայն և տարրողունակ եզրույթ է՝ նրա վրա ազդող գործոնների բազմազանության, գործունեության այլ տեսակների հետ ունեցած փոխադարձ կապերի մեջ: Այս առումով կարևոր է այն հանգամանքը, թե այդ կառուցվածքի որևէ կոնկրետ տեսակ ինչ նպատակներ է հետապնդում, և գործարարության կոնկրետ որ կողմերն են ցանկանում ընդգծել հեղինակները¹¹: Այսպես, հիմք ունենալով Ա. Հոսկինգի մոտեցումը գործարար միջավայրի կառուցվածքին, աշխատանքում առանձնացվել են վերջինիս դասակարգման 6 խմբեր՝

1. տնտեսական միջավայր (այդ թվում՝ շահույթի ստացում, բիզնեսի ընդլայնում, մշտական սպառողների ապահովում, ընտանեկան բիզնեսի փոխանցում, նոր աշխատատեղերի ստեղծում և թիմային աշխատանքներ, բրենդի ձևավորում և բրենդի վաճառք),
2. քաղաքական միջավայր (հատուկ ընդգծվում է, որ տնտեսության կառավարման ձևերն իշխանության քաղաքական նպատակների և խնդիրների արդյունք են),
3. իրավական միջավայր (օրենքներ, իրավական այլ ակտեր),
4. տեխնոլոգիական միջավայր (ԳՏԱ-ի մակարդակ, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն),
5. ֆիզիկական կամ աշխարհագրական միջավայր (հումքի, նյութերի, էներգիայի և այլ ռեսուրսների մատչելիություն, բնական պայմաններ և այլն),
6. ինստիտուցիոնալ միջավայր (ենթակառուցվածքներ, բանկեր, ուսումնական հաստատություններ, շուկայի ուսումնասիրության գործակալություններ, ապահովագրական ընկերություններ, տրանսպորտ, կապ)¹²:

Ինչ խոսք, նշված խմբերում դիտարկված առանձին բա-

¹¹ Kyureghyan A. M., «The mechanisms of business environment», "Development and Current Issues in Modern Science". N 3(10) March, Magnitogorsk, 2018, p. 20.

¹² Блажевич А.А. Стратегический менеджмент. Учеб. пособие. – Уфа: Изд. УГНТУ, 2005. - 19- 20 с.

ղաղրիչներ ունեն դրական և բացասական կողմեր: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում գործարար միջավայրի կառուցվածքի ուսումնասիրությունը հայ հեղինակների կողմից (Ա.Մարկոսյան¹³, Ա.Ավագյան¹⁴, Գ.Խաչատրյան¹⁵, Ա.Դրամբյան¹⁶) բավականին լավ հետազոտված ոլորտ է, ուստի մեր կողմից գործարար միջավայրի ուսումնասիրության հիմքում դրվել է սոցիալ-տնտեսական բաղադրիչի վերլուծությունը: Այս նկատառումից ելնելով՝ աշխատանքում ամփոփվել են գործարար միջավայրի վրա ազդող գործոնները (տե՛ս գծապատկեր 1.1.2):

«Արտաքին միջավայր» հասկացության վերաբերյալ առկա են տարբեր մեկնաբանություններ: Լայն իմաստով արտաքին միջավայրն այն բոլոր արտաքին գործոնների համախումբն է, որոնք ազդում են կազմակերպության գործունեության արդյունավետության վրա¹⁷: Նման միջավայրը կոչվում է արտաքին, քանի որ այն ձևավորվում է արտաքին մասնակիցների տնտեսական գործունեությունից¹⁸: Արտաքին միջավայրի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է կանխատեսել և հաշվի առնել ձեռնարկատիրական այն հնարավոր ռիսկերը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ ոչ միայն կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունավետության, այլև ռազմավարական նպատակների իրականացման վրա:

¹³ Մարկոսյան Ա. Պետությունը և շուկան, Երևան, «Տիգրան Մեծ», 2000թ., 560 էջ:


¹⁴ Ավագյան Բ., Մարկոսյան Ա, Սահակյան Վ. Գործարար միջավայրի հիմնախնդիրները և դրանց բարելավման ուղիները ՀՀ-ում և ԼՂՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», Երևան, 2014թ., 188 էջ:

¹⁵ Խաչատրյան Գ. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1-2 /630/ 2011թ., 192 էջ:

¹⁶ Դրամբյան Ա. Բիզնես միջավայրի կառուցվածքն ու դրա վրա ազդող գործոնները, «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #6 հունիս(168), 2014թ., Երևան, 97 էջ:

¹⁷ Зуб А.Т., Стратегический менеджмент: Теория и практика: Учебное пособие для вузов. - М.: Аспект Пресс, 2002. - 13 с.

¹⁸ Ковалев В.В., Волкова О.Н. Анализ хозяйственной деятельности предприятия. Учебник. — М.: ООО «ТК Велби», 2002.— с. 234-235.



Գծապատկեր 1.1.2. Գործարար միջավայրի կառուցվածքը¹⁹

¹⁹ Фаэй Л. Рэнделл Р. Курс. МВА по стратегическому менеджменту // Перевод с англ. Под ред. В. Осипова. М. : Алпина Бизнес Букс,- 2004. 31-32 с.

Արտաքին միջավայրի վրա ազդող գործոնները բաժանվում են երկու խմբի²⁰.

1. ուղղակի ազդեցության միջավայր՝ միկրոմիջավայր,

2. անուղղակի ազդեցության միջավայր՝ մակրոմիջավայր:

Ուղղակի ազդեցության միջավայրի մեջ ներառվում են այն գործոնները, որոնք անմիջականորեն ազդում են բիզնես միջավայրի վրա: Դրանք են՝ օրենքներն ու պետական կառավարման մարմինների գործունեությունը, աշխատանքային ռեսուրսները, մատակարարներն ու սպառողները, մրցակիցները: Մատակարարների վերլուծությունն օգնում է բացահայտելու այն ձեռնարկությունների գործունեությունը, որոնք արտադրում են հումք, նյութեր, արտադրանք և այլն, վերջինից են կախված արտադրանքի կամ ծառայության գինը և որակը: Վարկառուների և պոտենցիալ ներդրողների վերլուծությունը թույլ է տալիս գտնել նոր կապիտալի ներգրավման հնարավորություններ, ինչպես նաև ընդլայնել կազմակերպության գործունեությունը:

Մրցակիցների ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել կազմակերպության գործունեության առավելությունները և թերությունները, որոնց հիման վրա էլ կարող են բացահայտել սեփական մրցակցային առավելությունները և ձևավորել մրցակցության ռազմավարությունը, սակայն հարկ է նշել, որ բազմաթիվ կազմակերպություններ քիչ ուշադրություն են դարձնում նոր մրցակիցների ի հայտ գալուն և չեն տեսնում նրանց պոտենցիալ վտանգը, ինչն էլ հանգեցնում է այդ կազմակերպության շուկայական մասնաբաժնի կորստին:

Թվարկված գործոններից յուրաքանչյուրի վարքագծի փոփոխությունն անմիջական ազդեցություն է ունենում գործարար միջավայրի վրա:

Անուղղակի ազդեցության գործոններն առավել զլոբալ են և անմիջապես չեն ազդում գործարար միջավայրի վրա,

²⁰ Арутюнова Д.В. Стратегический менеджмент/ Учебное пособие. – Таганрог: Изд-во ТТИ ЮФУ, 2010. – с.12-13.

սակայն դրանք նույնպես կարող են վճռորոշ դեր ունենալ վերջինիս զարգացման համար²¹:

Օրինակ՝ 2007 թվականին Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն անմիջապես ազդեցություն չունեցավ ՀՀ գործարար միջավայրի վրա, սակայն դրա հետևանքները ՀՀ տնտեսությունը սկսեց շոշափել 2008-2009 թվականներից հետո: Այսինքն՝ մակրոմիջավայրի կամ անուղղակի ազդեցության միջավայրի գործոնները նույն մակրոտնտեսական ցուցանիշներն են, ինչպիսիք են՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունները, օրենքների և դրանց կատարման համապատասխանությունը, մաքսային և հարկային կանոնակարգերը և դրանց հետ կապված վարչարարությունները, ժողովրդագրությունն ու դրա կառուցվածքը, տնտեսական և տեխնոլոգիական զարգացումը, ենթակառուցվածքների վիճակն ու դրա վրա ազդող գործոնները, աղքատությունը, սոցիալական և մշակութային առանձնահատկությունները, շրջակա միջավայրն ու դրա պահպանման հետ կապված պետական քաղաքականությունը և այլն²²:

Հարկ է նշել, որ մակրոմիջավայրն արտաքին միջավայրում ստեղծում է ընդհանուր պայմաններ կազմակերպության գործունեության համար, սակայն տարբեր կազմակերպությունների վրա դրա ազդեցության աստիճանը կախված է նրանց գործունեության շրջանակից և ներքին ներուժից²³:

Բավականին դժվար է վերահսկել և ազդեցություն ունենալ մակրոմիջավայրի վրա, այնուամենայնիվ ընկերությունն իր կենսագործունեության ընթացքում պետք է պարբերաբար

²¹ Business studies Key Concepts and Principles Grand 10-12. P. 8.

²² Никифорова Е. В., Бердникова Л. Ф., Авинова В. А. Содержание и источники информации стратегического анализа внешней и внутренней среды организации / Е. В. Никифорова, Л. Ф. Бердникова, В. А. Авинова // Вектор науки Тольяттинского государственного университета. Серия: Экономика и управление. 2011. № 4. С. 79–81.

²³ Хорин А. Н., Стратегический анализ: учебное пособие / А. Н. Хорин, В. Э. Керимов. — М.: Эксмо, 2006. — с.89.

վերլուծի մակրոտնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունները և գնահատի դրանց ազդեցությունն իր հետագա գործունեության վրա:

Անուղղակի գործոնների թվին դասվում են մակրոտնտեսական ընդհանուր իրավիճակը և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան, շուկաների մասշտաբը և դրանց զարգացման մակարդակը, հարկային բեռի ծանրությունը և հարկային վարչարարության մակարդակը, բնակչության եկամուտները և դրանց բաշխումը, ապրանքային շուկաներում մրցակցության ինտենսիվության աստիճանը, գնողունակ պահանջարկի մակարդակը, արտաքին շուկաներ դուրս գալու հնարավորությունները և ներմուծման ու արտահանման հարաբերակցությունը, ներքին շուկայի պաշտպանվածության մակարդակը, արժույթային քաղաքականության և արժույթային կուրսերի կայունությունը, ներդրումների ծավալը և դրանց բաշխվածության համաչափությունը, տնտեսության իրական հատվածի համար վարկերի մատչելիությունը, հիմնական միջոցների մաշվածության վիճակը, նորացման աստիճանը, հետզնման ժամկետները, ազգային արժույթի կայունությունը և այլն, որոնք ազդում են շուկաներ մուտք գործելու, գործարար ռիսկերի և վերջին հաշվով՝ ձեռնարկատիրական նախաձեռնության վրա:

Մի շարք հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ներքին շուկայի տարողունակությունը, հատկապես վերամշակման բարձր մակարդակ պահանջող ապրանքների գծով, հանրապետությունում շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: Այս առումով իրենց մեծ ազդեցությունն են ունենում ՀՀ բնակչության աղքատության բարձր մակարդակը, եկամտային անհավասարության արդյունքում հասարակության գերբեռնվածությունը և դեռևս չձևավորված միջին խավը, որը ներմուծման մեծ ծավալների և արտահանման համեմատաբար փոքր ծավալների պայմաններում հայրենական արտադրության ապրանքների հիմնական սպառողն է:

Արտաքին շուկաները ՀՀ ձեռնարկությունների մեծ մասի համար շարունակում են մնալ անմատչելի՝ կապված ինչպես տնտեսական (հիմնական ֆոնդերի մաշվածության, ֆինանսական ապահովվածության ցածր մակարդակի, բարոյապետ մաշված տեխնոլոգիաների, հարկային բեռի բաշխման անհավասարության, մրցակցային ոչ առողջ մթնոլորտի, ժամանակակից մարքեթինգային տեխնոլոգիաների կիրառման գրեթե անհնարինության և այլն), այնպես էլ աշխարհաքաղաքական, տարածաշրջանային, ներքաղաքական և տարատեսակ այլ պատճառների հետ:

Քաղաքական և իրավական գործոնները որոշիչ նշանակություն ունեն հասարակության, գործարարության և պետության փոխհարաբերությունների, պետական կառավարման մեխանիզմների և հասարակության համար ծանրակշիռ որոշումների ընդունման ընթացակարգերի կայունության պահպանման, սեփականատիրական հարաբերությունների և քաղաքացիական իրավունքի զարգացման, տնտեսվարող սուբյեկտների միջև հարաբերությունների, տնտեսական վեճերի լուծման և այլ բնագավառներում²⁴: Այս ամենն ապահովում է գործարարության իրավական միջավայրի հուսալիությունն ու արժանահավատությունը երկարաժամկետ հատվածում, ինչն էլ թույլ է տալիս կուտակել ինսայդություններ, ձեռնարկատիրական նախաձեռնության իրացման նպատակով ներգրավել վարկային միջոցներ, ինչպես նաև երաշխավորում է իրականացված ծրագրերի արդյունքում ստացված շահաբաժինների արդարացի բաշխումը և վերջին հաշվով ձևավորում գործարարության ոլորտում պետական միջամտության կամ կարգավորման որակն ու մակարդակը: Ընդհանուր առմամբ շուկայական գործընթացների, այդ թվում՝ գործարարության պետական կարգավորման ձևերի և լծակների սահմանումը չափազանց կարևոր է այս ոլորտում բարենպաստ միջավայրի

²⁴ Department of Finance: Jagannath University. Assignment of fin- 2103; Principles of marketing 2010. Jagannath University. P. 20.

ստեղծման և պահպանման համար: Շուկայական գործընթացներին պետության չափից ավելի միջամտությունը սահմանափակում է ձեռնարկատիրության ազատությունը, մեծացնում գործարար միջավայր մուտք գործելու արգելքների հաղթահարման համար կատարվող ծախսերը, որն իր հերթին մեծացնում է գործարար նախագծի ռիսկերը և իջեցնում այդ նախագծի հաջող իրականացման հնարավորությունը:

Պետությունը կարևոր միջնորդ է տնտեսվարող սուբյեկտների միջև նրանց համար ապահովելով շուկայական քաղաքական-իրավական անհրաժեշտ միջավայրը և շուկայական գործընթացների կարգավորման ոլորտից պետության հեռացումը՝ պայմանավորված շուկայի մի շարք սկզբունքային թերություններով, կարող է բերել սոցիալական մեծ ծախքերի առաջացման: Հետևապես՝ անհրաժեշտ է սահմանել պետության կողմից շուկայական միջամտության որոշակի ձևեր և սահմաններ, որոնք կբխեն երկրում շուկայական մեխանիզմի սոցիալական և տնտեսական արդյունավետության մակարդակներից կամ այլ կերպ ասած՝ գործարարության արդյունավետության չափանիշից:

Ինստիտուցիոնալ գործոնները բնութագրում են շուկայի և գործարարության ենթակառուցվածքների՝ բանկային, ապահովագրական, բաշխիչ (ֆոնդային և ապրանքային բորսաներ, արժեթղթերի շուկա, մեծածախ առևտրի համակարգ, զբաղվածության կենտրոններ և այլն), շուկայական միջնորդների, գործարար ծառայությունների (մարքեթինգային, խորհրդատվական, գովազդային, փորձագիտական և այլն) համակարգերի, ինչպես նաև միասնական տեղեկատվական դաշտի իրական վիճակը, որոնք ապահովում են ապրանքների, կապիտալի և աշխատուժի ժամանակակից հոսքերը ոչ միայն տնտեսության ներսում, այլև դրա սահմաններից դուրս²⁵: Այս գործոնների համալիր ազդեցության բնույթից կախված էլ, ի վերջո, որոշ-

²⁵ Абалкина А.И., Курс переходной экономики. /Под ред.. М., 1997. Раздел 2.

վում են ձեռնարկատիրական ռիսկի և գործարարության ոլորտ մուտք գործելու արգելքների մակարդակները, ինչպես նաև գործարար միջավայրի բարենպաստության աստիճանը:

Տեխնոլոգիական գործոնը թույլ է տալիս երկրի գործարար շրջաններին դուրս գալ ազգային տնտեսության սահմաններից և մուտք գործել արտաքին շուկաներ, որի արդյունքում հնարավորություն են ստանում օգտվելու համաշխարհային գիտության և տեխնիկական առաջընթացի ժամանակակից արդյունքներից, իսկ մյուս կողմից՝ տվյալ երկիրն աստիճանաբար վեր է ածվում համաշխարհային տնտեսական համակարգի սուբյեկտի: Հայաստանի համար տեղեկատվական տեխնոլոգիաները հռչակվել են որպես տնտեսության համար գերակա ոլորտ: Մակայն հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է ղեկավարատիվ հայտարարություններից կտրուկ անցում կատարել նպատակային և կոնկրետ քաղաքականության մշակմանն ու դրա իրականացմանը՝ գործարարներին տրամադրելով պետական կոնկրետ և առարկայական օժանդակություն:

ՀՀ-ում գործարարության զարգացման գործընթացին բնորոշ յուրահատուկ գծերից մեկը գործարարության տեղեկատվական ապահովվածության ցածր մակարդակը և տեղեկատվական գործոնների բարենպաստ ազդեցության գրեթե չեզոքությունն է, ինչը թույլ չի տալիս ձեռնարկատերերին ժամանակին ու ճկուն արձագանքել շուկայի տարբեր ազդակներին և համարժեք ձևով ճշգրտել ձեռնարկությունների զարգացման ռազմավարական մարտավարությունը: Չնայած վերջին տարիների որոշակի տեղաշարժներին, այնուամենայնիվ, Հայաստանում գործարարության տեղեկատվական ապահովվածությունը կարելի է համարել անբավարար, ինչը հուշում է այս բնագավառում առկա բազմաթիվ հիմնահարցերի առկայության և դրանց լուծման ուղղությամբ պետական հատուկ մոտեցում ցուցաբերելու հրամայականի մասին: Վերջինս, նպատակ ունենալով գործարար շրջանակների համար հավաստի, արժանահավատ և օպերատիվ տեղեկատվության մատչելիության

ապահովումը, կբարձրացնի գործարարության արդյունավետությունը և էականորեն կնպաստի ձեռնարկատերերի կողմից հիմնավորված ու կշռադատված որոշումների ընդունմանը:

Ոչ պակաս կարևոր են նաև այն գործոնները, որոնք բացասական կամ արգելակիչ ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր առմամբ գործարարության և դրա բոլոր միջավայրերի, այլև ձեռնարկատիրական նախաձեռնության իրացման համար բարենպաստ ուղղությունների վրա: Այդպիսի գործոններից են Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը, արտաքին շուկաներից կտրվածության և տրանսպորտային խոշոր հիմնախնդիրները, գործարարության ենթակառուցվածքների զարգացման ցածր մակարդակը, հատկապես ներքին ներդրումների ծավալների խիստ անբավարարությունը, մրցակցային դաշտի թերությունը և այս բնագավառում պետական կարգավորման ինստիտուցիոնալ խոշոր հիմնահարցերը և այլն:

Հարկ է նշել, որ անուղղակի գործոնների ազդեցությունն առավել մեծ է և կրում է երկարաժամկետ բնույթ, քանի որ դրանք ազդում են երկրի տնտեսական զարգացման, ներքին և արտաքին քաղաքականությունների, իրավական ինստիտուտների վիճակի, սոցիալ-մշակութային զարգացման, երկրի աշխարհաքաղաքական զարգացման, ժողովրդականության, պետության սոցիալական քաղաքականության, մասնավորապես գիտության, կրթության, տեխնոլոգիայի և տեխնիկայի, ազգային անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության հիմնախնդիրների վրա:

Կազմակերպության արդյունավետ կառավարման համար խիստ կարևոր է բացահայտել նրա բաղադրամասերի փոխազդեցության առանձնահատկությունները: Կազմակերպության որպես սոցիոտեխնիկական համակարգի, հիմնական բա-

ղաղրամասերն են՝²⁶ նպատակը, մարդիկ, խնդիրները, տեխնոլոգիան, կառուցվածքը:

Գործարար միջավայրի ներքին գործոնները հանդես են գալիս որպես արտադրանքի արտադրության և դրա իրացման ամբողջություն, որոնք կարգավորվում են կազմակերպության կողմից²⁷: Եթե արտաքին գործոնների նկատմամբ կազմակերպությունը կարող է մասամբ ունենալ ազդեցություն, ապա ներքին գործոններն ամբողջությամբ վերցրած կառավարվում և վերահսկվում են անմիջապես կազմակերպությունների կողմից:

Դրանք բոլորը փոխկապակցված են և առանց մեկը մյուսին չեն կարող գործել: Օրինակ՝ նպատակը ցանկալի արդյունքն է, որին ձգտում է հասնել կոնկրետ կազմակերպությունը: Այն սահմանվում է կազմակերպությունում ներգրավված աշխատանքային ռեսուրսների կողմից: Տարբեր կազմակերպություններում նպատակները տարբեր են լինում, սակայն դրանք նման են, քանի որ ձգտում են նվազագույն ծախսերով ստանալ առավելագույն շահույթ: Խնդիրներն արդեն իսկ սահմանված նպատակների իրագործման գործընթաց է, որը պետք է իրականացվի նախապես մշակված միջոցներով, ըստ պաշտոնների տարբեր մոտեցումներով և պարտականություններով:

Ինչ վերաբերում է տեխնոլոգիային, ապա այն հումքից վերջնական արդյունքի վերածման գործընթաց է: Դա ենթադրում է ձևավորել համապատասխան որակավորում ունեցող մասնագետների խումբ, սարքավորումներ, տեխնոլոգիական գիտելիքներ, որոնք նպաստում են սահմանված նպատակի իրագործմանը: Գործարար միջավայրի ներքին գործոնների շարքում կենտրոնականը և շարժիչ ուժը մարդն է, իսկ կա-

²⁶ Սուվարյան Յու.Ս. «Մենեջմենթ երկրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն», «Տնտեսագետ» հրատ., Երևան, 2002թ., էջ 57:

²⁷ Поляков В.В., Щенин Р.К. и др. Мировая экономика и международный бизнес -М. : Кнорус, 2008. с. 44-45.

ուցվածքը կազմակերպության կառավարման մակարդակը գծային և ֆունկցիոնալ տարբեր հարթություններում²⁸:

Ընդհանուր առմամբ, որևէ երկրում գործարար միջավայրի վիճակը բնութագրելու և գնահատելու համար, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել փոքր և միջին ձեռնարկություններին, դրա մասնաբաժնին, զարգացման հնարավորություններին և պետական աջակցությանը²⁹, քանի որ գործարարությունում առկա խնդիրներն առավելապես դրսևորվում են հենց այդ բնագավառում: ՀՀ-ում, ըստ էության, դրանց հիմնադրումը համընկավ Խորհրդային Միության փլուզման հետ, երբ նոր-նոր էր ձևավորվում շուկայական տնտեսությունը: Դա այն ժամանակահատվածն էր, երբ ՀՀ-ում առկա էին թե՛ արտաքին, թե՛ ներքին տնտեսական ու քաղաքական խնդիրներ, մասնավորապես էներգետիկ ճգնաժամը, շրջափակումը, իրավական և օրենսդրական դաշտում տեղ գտած թերացումներն ու բացթողումները, միևնույն տնտեսական գործընթացի վերաբերյալ տարբեր օրենքներում կրկնակի մեկնաբանությունները, որոնք հաճախ հակասում էին միմյանց, մարքեթինգի և գործարար ծրագրերի ոլորտում՝ կառավարման փորձի պակասը, ֆինանսական և տնտեսագիտական վերլուծության, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության ավանդույթների բացակայությունը: Ընդ որում, ձեռնարկությունների ապապետականացման արդյունքում ձեռնարկությունների քանակը շեշտակի աճեց: Ըստ վիճակագրական տվյալների՝ 1994-1998թթ. օբյեկտների սեփականաշնորհման արդյունքում ստեղծվեցին մոտ 5500 ՓՄՁ-ներ³⁰, որը

²⁸ Тис Д. Дж. Выявление динамических способностей: природа и микрооснования (устойчивых) результатов компаний [Текст] / Д. Дж. Тис // Российский журнал менеджмента. – 2009. – Т. 7. – № 4. – С. 59-108.

²⁹ Մարկոսյան Ա, Ավագյան Բ., Սահակյան Վ. Գործարար միջավայրի հիմնախնդիրները և դրանց բարելավման ուղիները ՀՀ-ում և ԼՂՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ», Երևան, 2014թ., էջ 70:

³⁰ Ազգային վիճակագրական ծառայություն ՀՀ մարզերով՝ թվերով, Երևան, 1999թ., էջ 75-78:

ենթադրում էր մրցակցություն, շուկայական տնտեսության կայունացում: Իրականում թե՛ օբյեկտիվ, թե՛ սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված դա չժառայեց նպատակին՝ ձեռնարկությունների մեծ մասը արդեն իսկ գրանցման պահից կամ չէր գործում, կամ էլ գործում էր ոչ արդյունավետ: Ավելին, ձեռնարկությունների կտրուկ աճն ավելի խորացրեց երկրում ստեղծված առանց այն էլ ճգնաժամային կացությունը:

ՀՀ կառավարությունն արդեն 1997 թվականին, գիտակցելով երկրի տնտեսության զարգացման գործում փոքր և միջին ձեռնարկությունների նշանակությունը, նախաձեռնեց ոլորտի զարգացմանն անհրաժեշտ նախապայմանների ստեղծման գործընթացը:

Կառավարության առաջին հանձնարարականն Առևտրի և արդյունաբերության նախարարությանը վերաբերում էր ՓՄՁ քաղաքականության ու ռազմավարության մշակմանը: Ոլորտի առաջին ռազմավարական փաստաթուղթը կոչվեց «Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման քաղաքականություն և ռազմավարություն»: Փաստաթղթի մշակման գործընթացը բավականին բաց էր, քանի որ Հայաստանում չկային ո՛չ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ո՛չ էլ գործարարների ոլորտի նկատմամբ կիրառված որևէ մոտեցում:

ՀՀ-ում անկախության տարիներից հետո իրականացվել են տնտեսական, իրավական, սոցիալական և նույնիսկ մշակութային բարեփոխումներ, որոնց նպատակներից են՝

1. ՀՀ նոր տնտեսական հարթակների ձևավորումը,
2. գործարարության զարգացումը,
3. բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Այնուհանդերձ ՀՀ տնտեսական գործընթացների տարբեր հարթություններում դեռևս գոյություն ունեն թերություններ և բացթողումներ՝ կապված

1. օրենսդրության անկատարության հետ, որի շարունակական փոփոխությունները ձեռներեցների վարքագծում ստեղ-

ծում են անորոշության մթնոլորտ՝ նպաստելով գործարարության ակտիվության նվազեցմանը: Նման փոփոխություններն առավելապես հատկանշական են հարկային տարբեր օրենքներին:

2. Մակրոտնտեսական քաղաքականության փոփոխությունների ազդեցության մասով գործարար միջավայրի կառուցվածքում տեղի են ունենում էական տեղաշարժեր:

3. Իրավական գործընթացների փոփոխության հետևանքով առանձին օրենքների փոփոխությունները, մասնավորապես արտոնագրման, վարձակալության, աշխատանքային հարաբերություններ կարգավորման մասով փոփոխությունները մի կողմից նպաստում են գործարարության նոր տեսակների զարգացմանը, մյուս կողմից ավելացնում «վարչարարական բեռը»:

4. Գործարարության հետ կապված մշակութային և ազգային կարծրատիպերի փոփոխություն, որով պայմանավորված են գործարարության զարգացման հետագա ընթացքը, մոտեցումը և ուղղվածությունը:

Անկախ ՀՀ գործարար միջավայրի կարգավորման հարցում պետության կողմից թույլ տրված բացթողումներից ու թերացումներից (գծապատկեր 1.1.3), ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ վերջին 25 տարիների ընթացքում կառուցվածքային փոփոխություններն ի վերջո բերել են որոշակի գործարար միջավայրի ձևավորման: Վերջինիս զարգացման կարևոր նախադրյալ է ֆինանսական, մասնավորապես փոխառու միջոցների մատչելիության ապահովումը: Երաշխիքների բացակայության պատճառով բանկերը խուսափում են գործարարության վարկավորումից: Դա համարում են համեմատաբար բարձրոյակային, անարդյունավետ և եթե տրամադրում են, ապա հիմնականում բարձր տոկոսադրույքներով (պարտադիր գրավի առկայությամբ): Դրանով պետք է բացատրել երկարաժամկետ վարկերի գրեթե բացակայությունը:

Օրենսդրության և հարկային համակարգի անկատարություն,
արտարժույթի փոխարժեքի տատանումներ

Գործարարությանն առնչվող օրենսդրական փոփոխությունների
վերաբերյալ իրավագիտակցության և տեղեկացվածության ցածր

Գործարարությամբ զբաղվող ցանկացողների փորձի պակաս և
սեփական միջոցների անբավարարվածություն

Վարձակալության դժվարություններ և ասիմետրիկ տեղեկատվություն

Նյութական բազայի անբավարարություն, հումքի, նյութի բարձր գներ,
էլեկտրաէներգիայի, գազի և ջրի բարձրացող սակագներ

Արտոնությունների բացակայություն հատկապես գերփոքր և փոքր
ձեռնարկությունների համար, կոռուպցիա

Ներդրումների անշահավետություն, շուկայի անկատարություն,
արևմտյան գործընկերների անվստահություն, բացասական
վերաբերմունք ձեռնարկությունների նկատմամբ

Արտաքին շուկան դուրս գալու և սեփական արտադրանքը
ներկայացնելու բարդություններ

**Գծապատկեր 1.1.3. Գործարար միջավայրին բնորոշ
հիմնախնդիրները³¹**

³¹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից:

5. Ձեռնարկությունների գործունեության անվտանգություն: Հայաստանում շուկայի զարգացումը բնութագրվում է ձեռնարկությունների համար հավանական մի շարք վտանգներով և օրենքների հիման վրա դրանց հակազդելու հնարավորությունների փաստացի բացակայությամբ՝

- մատակարարների կողմից իրենց պարտավորությունների չկատարում,
- ձեռնարկությունների մասին գաղտնի տեղեկատվության արտահոսք,
- ներքին շուկայի ցածր պահանջարկ:

Չնայած Հայաստանի ներքին շուկան դեռ հեռու է հազեցվածության կետից, այնուամենայնիվ, գտնում ենք, որ տնտեսության դինամիկ զարգացման համար ձեռնարկությունների գործունեությունը հիմնականում պետք է ուղղված լինի դեպի արտաքին շուկաներ, որը սլահանջում է նպատակային պետական օժանդակություն, ժամանակ, ֆինանսներ:

6. Արտաքին շուկաների դուրս գալու և սեփական արտադրանքը ներկայացնելու բարդությունները՝

- տեղական արտադրանքի որակական հատկանիշների անմրցունակությունն արտաքին շուկայում,
- մաքսային ընթացակարգերի բարդությունը,
- էլեկտրաէներգիայի, գազի և ջրի, ինչպես նաև արտահանվող ապրանքների գների բարձր լինելու հետևանքով միջազգային շուկայում ոչ մրցունակ լինելը,
- ազատ մրցակցության բացակայությունը:

Մենաշնորհների հիմնախնդիրների ոչ լիարժեք լուծումը ևս շարունակում է խոչընդոտել ՀՀ գործարար միջավայրի վրա, իզուր չէ, որ ԵՄ-ի հետ ազատ առևտրի առաջնային նախապայման է դարձել մենաշնորհների վերացումը Հայաստանում³²: Ուստի գործարար միջավայրի բարձր ակտիվությունը պահպանելու համար անհրաժեշտ է իրականացնել արդյու-

³² Mediamaxs. Ликвидация монополий в Армении-одно из предцеловий свободной торговли с ЕС. 13 Апрель г. 2012

նավետ հակամենաշնորհային քաղաքականություն, ինչը նպատակ ունի պահպանել բարեխիղճ մրցակցությունը և ապահովել շուկայական հարաբերությունների արդյունավետությունը: Թեև մենաշնորհների հիմնախնդիրների հարցը մշտապես բարձրացվել է, սակայն պետական կարգավորումն այս ուղղությամբ ցանկալի մակարդակի վրա չէ³³: Կարևորում ենք դիտում պետության հովանավորչական քաղաքականությունը ձեռնարկությունների ստեղծման և դրանց արտադրանքի արտահանման ուղղություններով՝ համապատասխան օրենսդրափրավական դաշտի ու ձեռնարկատերերի իրավական պաշտպանվածության առումներով³⁴:

Ամփոփելով հարկ է նշել, որ գործարար միջավայրը, հանդիսանալով տնտեսական, սոցիալական և քաղաքական բազմաբնույթ և տարատեսակ գործառույթներ իրականացնող ոլորտ, կրում է բազմաթիվ գործոնների ազդեցությունը՝ մի կողմից հարմարվելով այդ գործոնների ազդեցությամբ ստեղծված նոր միջավայրին, իսկ մյուս կողմից՝ փորձելով վերափոխել այդ միջավայրը՝ առաջ մղել սեփական շահերը և հասնել առավելագույն արդյունքի:

1.2. Գործարար միջավայրի զարգացմանը նպաստող գործոնային վերլուծությունն արտերկրում և տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում

Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակում են «Doing Business» տարեկան զեկույցներ, որոնցում ամփոփ ներկայացվում են աշխարհի 190 երկրներում գործարարությամբ զբաղվելու հիմնական

³³ Կյուրեղյան Ա. Մ. Գործարար միջավայրի վրա ազդող գործոնների հարցի շուրջ, «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, N 4, Երևան, 2017թ., էջ 75:

³⁴ Խաչատրյան Գ. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՀ ԳԱԱ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1-2 /630/, 2011թ., էջ 134-154:

տասնյակ ցուցանիշներ փոքր և միջին բիզնեսի կայացման, գործարար միջավայրի և բիզնես վարելու կանոնների վերաբերյալ: Գործարար միջավայրի՝ երկրում բիզնես սկսելու և վարելու դյուրինության աստիճանը բնութագրող ցուցանիշներ են համարվում՝³⁵

- սեփականության գրանցումը,
- բիզնես սկսելու մեկնարկային պայմանները,
- ներդրողների պաշտպանվածությունը,
- շինարարության թույլատվության տրամադրումը,
- հարկերի վճարումները,
- վարկերի հասանելիությունը,
- էլեկտրականության միացումը,
- պայմանագրերի կիրառումը,
- անվճարունակության հարցերի կարգավորումը,
- միջազգային առևտուր վարելու դյուրինությունը:

Ներկայացված 10 ընթացակարգերը գործարար միջավայրի այն վարկանիշային գնահատականներն են, որոնք նաև հնարավորություններ և նախադրյալներ կստեղծեն օտարերկրյա ներդրողների ներգրավման, ներդրումային նոր ծրագրերի իրագործման և կայուն տնտեսական աճի ապահովման համար³⁶:

Հայաստանում, ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային կորպորացիայի զեկույցի, միասնական եկամտային հարկի ներդրման արդյունքում, որը ներառում է գործատուների և աշխատողների սոցիալական վճարները և անհատների կողմից վճարվող եկամտահարկը³⁷, 2012-2016թթ. առավել դյուրին է դարձել հարկերի վճարման գործընթացը:

³⁵ <http://www.doingbusiness.org>:

³⁶ Djankov S., Freund C., Cong S. Pham. Trading on Time// Review of Economics and Statistics.-2010. -N92(1) -p. 116-173

³⁷ Բաղդասարյան Ք. Ներդրումային ծրագրերի իրականացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2016թ., էջ 35:

«Doing Business»-ի զեկույցներում Հայաստանի Հանրապետության ցուցանիշները 2008-2020թթ.³⁸

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները	84.77	84.97	90.4	94.3	94.8	94.86	97.5	97.8	72.2	73.6	73,2	96,1	96,1
Սեփականության գրանցում	92.95	93.17	93.3	92.8	92.9	92.96	93	93	87.3	87.4	87,2	88,6	88,6
Հարկերի վճարումներ	40.53	40.62	40.6	40.6	53.6	71.42	74.5	82.1	72.5	72.5	60,2	74	81,5
Շինարարության թույլտվության տրամադրում	59.7	63.92	65.3	64.7	74	73.7	73.6	73.8	69.9	70	70,1	68,0	73,1
Վարկերի հասանելիություն	68.75	68.75	68.8	68.8	75	75	65	65	65	75	74	70,0	70,0
Միջազգային առևտուր վարելու դյուրինություն	61.36	56.81	56	64	63.9	64.68	64.5	68.8	86.5	86.5	86,3	90,8	91,7
Էլեկտրականության միացում			49.5	49.3	49.4	55.98	64	64	70	73.2	74	90,8	87,7
Ներդրողների պաշտպանվածություն	50	50	50	50	50	63.33	60	60	60	60	60	42	40
Պայմանագրերի կիրառում	58.2	59.24	59.2	59.2	51.5	51.45	53.3	53.3	67.9	69.7	69	69,7	69,7
Անվճարունակության հարցերի կարգավորում	-	-	-	-	-	-	-	-	46.4	46.1	45,2	44,0	44,6

³⁸ Հիմք են ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» զեկույցի տվյալները 2008-2020թթ.,
<http://www.doingbusiness.org/data>

Բերված 1.2.1 աղյուսակը պատկերացում է տալիս ՀՀ-ում բիզնես սկսելու մեկնարկային պայմանների, սեփականության գրանցման, հարկերի վճարումների, շինարարության թույլտվության տրամադրման, վարկերի հասանելիության, միջազգային առևտուր վարելու դյուրինության, ներդրողների պաշտպանվածության և պայմանագրերի կիրառման ընթացակարգերն ազդում են գործարար միջավայրի վրա:

Աղյուսակ 1.2.2

Հայաստանի Հանրապետությունը և տարբեր երկրները «Գործարարությանը զբաղվելը» զեկույցի վարկանիշային աղյուսակում 2019-2020թթ.³⁹

Երկրներ	2019	2020	Վերելք/անկում
Էստոնիա	11	12	1↓
Լատվիա	17	14	3
Վրաստան	23	16	7
Լիտվա	21	21	0
Ղազախստան	51	35	16
Բելառուս	50	37	13
Հայաստան	41	47	6↓
Ռուսաստան	36	40	4↓
Մոլդովա	47	44	3
Ադրբեջան	61	65	4↓
Ղրղրզստան	73	75	2↓
Ուզբեկստան	82	87	5↓
Տաջիկստան	130	128	2

Համաձայն «Գործարարությանը զբաղվելը» վարկանիշային աղյուսակի՝ 2020 թվականին Հայաստանը գործարարությանը զբաղվելու դյուրինությամբ 190 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ տեղը՝ 2019 թվականի համեմատ իր դիրքը զիջելով 6

³⁹ <http://www.doingbusiness.org/data>

հորիզոնականով, Բելառուսը դիրքը բարելավել է 13, Ռուսաստանը նվազեցրել է 4, իսկ Ղազախստանը բարելավել է 16 հորիզոնականով (աղյուսակ 1.2.2):

ՀՀ-ը ցուցանիշներից 4-ի մասով արձանագրել է առաջընթաց, 2-ով՝ հետընթաց, իսկ 4 ցուցանիշների դիրքերը մնացել են անփոփոխ: Հայաստանը միանգամից 5 կետով բարելավել է դիրքը «Շինարարության թույլատվության տրամադրում» ցուցանիշով՝ զբաղեցնելով 62-րդ տեղը: «Հարկերի վճարումներ» ցուցանիշով առաջընթացը կազմել է 7 կետ՝ 52-րդ տեղ, «Միջազգային առևտուր վարելու դյուրինության» ցուցանիշով 0,9 կետով առաջընթաց է արձանագրել՝ զբաղեցնելով 43-րդ տեղը, իսկ «Անվճարունակության հարցերի կարգավորում» ցուցանիշով 0,6 կետով՝ զբաղեցնելով 95-րդ տեղը:

Հայաստանի Հանրապետությունում հետընթաց է արձանագրվել միայն 2 կետով՝ «Էլեկտրականության միացում» ցուցանիշով համապատասխանաբար զբաղեցնելով 30-րդ տեղը և «Ներդրողների պաշտպանվածության» ցուցանիշով՝ 42-րդ տեղը: Վերջինս կարող է լուրջ խնդիր հանդիսանալ երկրի հետագա զարգացման համար ներդրումների հոսքերի կրճատման առումով: «Բիզնես սկսելու մեկնարկային պայմաններ», «Պայմանագրերի կիրառումը», «Վարկերի հասանելիության» և «Սեփականության գրանցում» ցուցանիշներով երկրի դիրքը մնացել է անփոփոխ՝ համապատասխանաբար զբաղեցնելով 10-րդ, 13-րդ, 48-րդ և 30-րդ տեղերը⁴⁰: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այստեղ առաջընթաց է արձանագրվել միայն «Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները» և «Շինարարության թույլատվության տրամադրումը» ցուցանիշներով՝ 11 և 2 կետով համապատասխանաբար զբաղեցնելով 26-րդ և 115-րդ տեղերը, իսկ մնացած 8 ցուցանիշներով գրանցվել է հետընթաց: Վերջինս խոսում է առաջիկա տարիներին բարեփոխում-

⁴⁰ Kyureghyan A. M. «Factor analysis contributing to the development of business environment abroad and its application capabilities in the Republic of Armenia», Economics, № 6(30), Warszawa, Polska, 2019 pp. 19-20.

ների իրականացման անհրաժեշտության մասին: Բելառուսը լավագույն արդյունքներն է գրանցել «Էլեկտրականության միացումը», «Անվճարունակության հարցերի կարգավորումը» և «Ներդրողների պաշտպանվածությունը» ցուցանիշների մասով՝ զբաղեցնելով համապատասխանաբար 24-րդ, 69-րդ և 42-րդ տեղերը, իսկ «Հարկերի վճարումները» ցուցանիշի մասով գրանցվել է հետընթաց 4 կետով և զբաղեցրել 99-րդ տեղը, ինչը նշանակում է, որ երկիրը դեռ բավականին անելիքներ ունի հարկերի վճարման պայմանները բարելավելու համար: ԱՊՀ երկրներից Սոլոովան հետընթաց է արձանագրել «Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները» ցուցանիշի գծով՝ 6 կետ, զբաղեցնելով 44-րդ տեղը, և առաջընթաց «Հարկերի վճարումները» ցուցանիշով՝ զբաղեցնելով 31-րդ տեղը: Ադրբեջանն առաջընթաց է ունեցել միայն «Միջսահմանային առևտրի դյուրինությունը» և «Հարկերի վճարումները» ցուցանիշների մասով, իսկ մնացածներում արձանագրվել է հետընթաց: Վրաստանն այդ ցուցանիշներից 7-ի մասով առաջընթաց է արձանագրել, 1 ցուցանիշով՝ հետընթաց, իսկ 2 ցուցանիշների դիրքերը մնացել են անփոփոխ (աղյուսակ 1.2.3):

Չնայած դրական փոփոխություններին՝ ՀՀ-ում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացումը: Ի թիվս դրանց, կարելի է ընդգծել շինարարության թուլատվության տրամադրման, միջազգային առևտուր վարելու դյուրինության, հարկերի վճարումների, սեփականության գրանցման, ներդրողների շահերի պաշտպանության հետ կապված խնդիրները, որոնք պայմանավորված են նաև կոռուպցիոն ռիսկերով, ստվերային տնտեսությամբ, գործազրկության բարձր մակարդակով, եկամուտների անհավասարաչափ բաշխմամբ, հարկային վարչարարությամբ և քաղաքական դիրքորոշմամբ, անհավասար մրցակցային պայմաններով:

ԱՂՀ և Մերձբալթյան երկրների վարկանիշային գնահատականը՝ ըստ «Գործարարությանը զբաղվելը» զեկույցի, 2020 թվական⁴¹

Ցուցանիշներ	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Դրոբզստան	Մոլդովա	Ուզբեկստան	Տաջիկստան	Ադրբեջան	Լատվիա	Լիտվա	Էստոնիա	Վրաստան
Բիզնես սկսելու մեկնարկային պայմանները	10	26	31	45	30	44	25	85	5	22	29	14	8
Սեփականության զրանցում	13	9	5	18	8	21	75	97	22	23	2	6	3
Վարկերի հասանելիություն	48	44	101	75	32	32	44	118	118	7	32	32	7
Պայմանագրերի կիրառում	30	12	27	9	141	62	38	54	44	23	6	11	1
Միջազգային առևտուր վարելու դյուրինություն	43	140	30	119	79	34	165	144	83	25	19	17	54
Ներդրողների պաշտպանվածություն	42	53	42	3	42	42	70	27	32	42	51	53	7
Էլեկտրականության միացում	30	30	24	75	163	73	83	173	105	42	55	38	39
Անվճարունակության հարցերի կարգավորում	95	51	69	37	130	60	77	144	86	44	66	42	5
Շինարարության թույլտվության տրամադրում	62	115	28	22	32	165	147	162	127	23	16	9	8
Հարկերի վճարումներ	52	45	99	60	148	31	138	140	40	15	27	21	22

⁴¹ <http://www.doingbusiness.org/data>

Քաղաքական անկախության ձեռքբերումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանությունները սկսեցին ակտիվ ջանքեր գործադրել՝ արտաքին տնտեսական կապերի համալիրի վերակառուցման և համաշխարհային առևտրատնտեսական գործընթացներին, միջազգային կազմակերպություններին ու շուկաներին ինտեգրվելու ուղղությամբ սկզբունքորեն նոր տիպի հարաբերությունների ձևավորման համար:

Հայաստանի համար այս փուլի սկիզբ կարելի է համարել 1992թ. ապրիլի 28-ին «Միջազգային արժութային հիմնադրամին, վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, միջազգային ֆինանսական կորպորացիային, զարգացման միջազգային ասոցիացիային, կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և կապիտալ ներդրումների վերաբերյալ տարաձայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին ՀՀ անդամակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որին հետագայում հաջորդեցին մի շարք իրավական փաստաթղթերի ընդունումը և վերջին հաշվով ԱՀԿ-ի լիիրավ անդամության ձեռքբերումը:

Թեև համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու և ազգային տնտեսության զարգացման տեմպերի կայունության ապահովման առումով ԱՀԿ-ին անդամակցելը բավականին լայն հնարավորություններ է ստեղծում, այնուհանդերձ, դա չի կարող բավարար լինել՝ արտաքին տնտեսական հարաբերությունների լիարժեք գործող համակարգ ձևավորելու համար: Վերջինս պահանջում է ակտիվ ջանքեր գործադրել նաև տարածաշրջանային ինտեգրացիայի ուղղությամբ: Նմանատիպ ինտեգրացիոն միություն է Եվրասիական տնտեսական միությունը, որի լիիրավ անդամը դարձավ Հայաստանի Հանրապետությունը 2015թ.:

Անդրադառնալով արտաքին առևտրին՝ ապա Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրներ ապրանքներն արտահանվում և Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրներից Հայաստանի

Հանրապետությունն ապրանքները ներմուծվում են «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան, բացառությամբ խողովակաշարային տրանսպորտով, էլեկտրահաղորդման գծերով, ջրային կամ օդային ուղիներով տեղափոխվող ապրանքների՝ համաձայն Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագրի 5-րդ հավելվածի:

2000-2007թթ. ԱՊՀ երկրների արտահանման մեջ ՀՀ-ի արտահանման տեսակարար կշռի մակարդակն ունեցել է նվազման միտում. 2000 թվականին այն կազմել է 24.41 տոկոս, իսկ 2007 թվականին՝ 23.21 տոկոս, սակայն նույն ժամանակահատվածում ներմուծման տեսակարար կշռի մակարդակն ավելացել է 61.0 տոկոսով (աղյուսակ 1.2.4):

Աղյուսակ 1.2.4

ՀՀ արտահանման և ներմուծման տեսակարար կշիռը ԱՊՀ երկրների արտահանման և ներմուծման կառուցվածքում 2000-2019թթ. (հազար ԱՄՆ դոլար)⁴²

	Ընդամենը արտահանում (Հայաստան)	ԱՊՀ երկրներ	Տեսակարար կշիռ	Ընդամենը ներմուծում (Հայաստան)	ԱՊՀ երկրներ	Տեսակարար կշիռ
2000	300487.4	73363.2	24.41	884733.3	173613	19.62
2001	341836.1	89081.9	26.05	877434.1	218496.1	24.90

⁴² ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2005թ., 2007թ., 2012թ., 2016թ., 2017թ., 2020թ., «Արտաքին տնտեսական գործունեություն», էջ 459, 424, 440, 446, 450, 498 <http://www.armstat.am/file/doc/539.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99450563.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99473898.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99499483.pdf> <http://armstat.am/file/doc/99504428.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99520978.pdf> : Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ., «արտաքին առևտուր», էջ 81 http://www.armstat.am/file/article/sv_11_17a_411.pdf: Հաշվարկներն իրականացվել են հեղինակների կողմից:

	Ընդամենը արտահանում (Հայաստան)	ԱՊՀ երկրներ	Տեսակարար կշիռ	Ընդամենը ներմուծում (Հայաստան)	ԱՊՀ երկրներ	Տեսակարար կշիռ
2002	505159.7	96331.8	19.06	987155.5	301810.6	30.57
2003	685599.8	129103.2	18.83	1279486	355294.6	27.76
2004	722911.5	125090.7	17.30	1350698	386856	28.64
2005	973920.5	187850.3	19.28	1801736	521772.5	28.95
2006	985108.2	157838.5	16.02	2191613	660774	30.15
2007	1152300.8	267475.5	23.21	3267788	1032365	31.59
2008	1057161.4	249215.5	23.57	4426129	1262772	28.52
2009	710157.5	138327.5	19.47	3321134	1041770	31.36
2010	1041056.6	198773.9	19.09	3748954	1142160	30.46
2011	1334338.8	268 062.3	20.08	4145332	1208824	29.16
2012	1380199.2	336 604.2	24.38	4261233	1334525	31.31
2013	1478748.6	400 162.8	27.06	4385866	1299948	29.63
2014	1547286.8	357 112.4	23.07	4424425	1363089	30.80
2015	1485331.9	286 361.4	19.27	3239239	1096885	33.86
2016	1791723.7	412940.1	23.20	3273469	1120716	34.23
2017	2013821.6	528379.6	26.00	3770442	1199621	31.81
2018	2412432.7	719026.9	29.8	4975537.5	1492903.6	30,0
2019	2648582.8	808720.5	30,5	5537592.8	1707743.1	30,0

2010 թվականին 2008 թվականի համեմատ ներմուծման տեսակարար կշիռն ավելացել է 6.8 տոկոսով, իսկ արտահանման տեսակարար կշիռը նվազել է 19 տոկոսով: 2019 թվականին նախորդ տարվա համեմատ ներմուծման տեսակարար կշիռը չի փոփոխվել, սակայն միաժամանակ արտահանման տեսակարար կշիռն ավելացել է 2.3 տոկոսով:

ՀՀ արտահանման տեսակարար կշիռը ԵԱՏՄ երկրների
արտահանման կառուցվածքում 2000-2019թթ. (հազար ԱՄՆ դոլար)⁴³

	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղըզստան	Տաջիկստան	Տեսակարար կշիռ
2000	300487.4	44559.9	903.2	1268.8	13.9	0.1	15.55
2001	341836.1	60501.3	1203.9	1129.4	130	241.8	18.49
2002	505159.7	64634	1492.9	811.8	93.2	146.6	13.29
2003	685599.8	94415.6	18674.2	1050.4	112.5	0	16.66
2004	722911.5	77897.7	29061.9	1748.2	17.6	0.1	15.03
2005	973920.5	119004.2	46832.9	2637.2	24.6	4.7	17.30
2006	985108.2	121155.6	3797.4	3988.9	162.1	242.1	13.13
2007	1152300.8	201542.5	2487.2	7248.5	154.4	60.2	18.35
2008	1057161.4	208174.9	2787.6	2899.9	218.5	23.4	20.25
2009	710157.5	107426.3	4628.2	2404.2	192	264.7	16.18
2010	1041056.6	160507.8	4580.7	3085.3	329.7	212.1	16.20
2011	1334338.8	222273.7	5950.3	4398.5	381.4	624.9	17.50
2012	1380199.2	279109	6710.3	3964.1	201.6	485.3	21.04
2013	1478748.6	334125.7	8561.6	7293.3	1005.2	1346.4	23.82
2014	1547286.8	308250.2	9036.5	6951.8	376.7	664.2	21.02
2015	1485331.9	244892.9	6810.4	4165.9	370.9	386.7	17.27
2016	1791723.7	374470.7	13412.3	4973.6	1036.6	663.8	22.02
2017	2013821.6	494364.6	6157.8	4329.4	1135.2	645.3	25.15
2018	2412432.7	665768.6	11942.9	9791.6	970.5	1797.4	28,61
2019	2648582.8	742696.4	17919.4	5414.4	3152.1	1713.6	29,10

⁴³ ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2005թ., 2007թ., 2012թ., 2016թ., 2017թ., 2020թ., «Արտաքին տնտեսական գործունեություն», էջ 487, 452, 468, 473, 477, 520 <http://www.armstat.am/file/doc/539.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99450563.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99473898.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99499483.pdf>, <http://armstat.am/file/doc/99504428.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99520978.pdf> «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ., «արտաքին առևտուր», էջ 81, http://www.armstat.am/file/article/sv_11_17a_411.pdf: Հաշվարկներն իրականացվել են հեղինակների կողմից:

Ինչպես երևում է 1.2.5 աղյուսակի տվյալներից, 2000-2007թթ. ԵԱՏՄ երկրների արտահանման մեջ ՀՀ արտահանման տեսակարար կշռի մակարդակն ունեցել է աճի միտում. 2000 թվականին այն կազմել է 15.55 տոկոս, իսկ 2007 թվականին՝ 18.35 տոկոս, ներմուծման տեսակարար կշռի մակարդակն ավելացել է 48.1 տոկոսով (աղյուսակ 1.2.6) :

Աղյուսակ 1.2.6

ՀՀ ներմուծման տեսակարար կշիռը ԵԱՏՄ երկրների ներմուծման կառուցվածքում 2000-2019թթ. (հազար ԱՄՆ դոլար)⁴⁴

	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Տաջիկստան	Տեսակարար կշիռ
2000	884733.3	137157.5	624.5	872.7	1.5	0	15.67
2001	877434.1	173648	1086	495.3	62.5	0	19.97
2002	987155.5	192897.6	2040.3	1731.6	9	0.2	19.92
2003	1279485.5	174907.9	10581	8190.8	8.3	0	15.13
2004	1350697.6	159687.2	13127.3	12007.7	1.7	0	13.68
2005	1801735.9	242632.4	19212	1052.9	757.3	3.3	14.63
2006	2191612.6	304170.8	17543.3	159418.3	9	0	21.95
2007	3267788	720440.4	23604.6	14618	16.4	236	23.22
2008	4426129.4	851172.5	28378	18487.9	26.8	27.2	20.29

⁴⁴ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2005թ., 2007թ., 2012թ., 2016թ., 2017թ., 2020թ., «Արտաքին տնտեսական գործունեություն», էջ 487, 452, 468, 473, 477, 520
<http://www.armstat.am/file/doc/539.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99450563.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99473898.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99499483.pdf>,
<http://armstat.am/file/doc/99504428.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99520978.pdf>: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ., «արտաքին առևտուր» էջ 81
http://www.armstat.am/file/article/sv_11_17a_411.pdf: Հաշվարկներն իրականացվել են հեղինակների կողմից:

	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Տաջիկստան	Տեսակարար կշիռ
2009	3321133.9	792241.6	24605.8	3216.4	372.5	2.1	24.70
2010	3748953.5	835271.7	31909.3	11894.4	41.1	204.8	23.45
2011	4145332	890873.2	29574.5	25335.9	0.7	80.4	22.81
2012	4261232.7	1057416.4	33588.8	8896.5	65.7	119.9	25.81
2013	4385865.9	1025159.7	40874.8	740.9	7	768.8	24.34
2014	4424424.5	122876	31031.5	556.3	98.5	335.1	30.50
2015	3239238.7	942384.6	25659.8	378.8	126	4	29.90
2016	3273469.3	983835.4	23299.3	678.8	84.5	0	30.78
2017	3770442.7	1040031.5	34087.6	3689.9	80.2	0.2	28.58
2018	4 975537.5	1259897.1	38610.2	3692.4	300.2	5.1	26,1
2019	5537592.8	1490032.4	49868.4	2922.6	2380.2	20.8	27,9

2010 թվականին 2008 թվականի համեմատ ներմուծման տեսակարար կշիռն ավելացել է 15.5 տոկոսով, իսկ արտահանման տեսակարար կշիռը նվազել է 20 տոկոսով, վերջինիս նվազման պատճառը ԵԱՏՄ անդամ-երկրներում 2009 թվականին արձանագրված ֆինանսական ճգնաժամն է:

2019 թվականին նախորդ տարվա համեմատ ներմուծման տեսակարար կշիռն աճել է 6.8 տոկոսով, իսկ արտահանման տեսակարար կշիռն աճել է 1.7 տոկոսով:

Այսպիսով, 2019 թվականին նախորդ տարվա համեմատ ԱՊՀ անդամ-երկրների ներմուծման մեջ ՀՀ-ի ներմուծման տեսակարար կշռի մակարդակը մնացել է նույնը, իսկ ԵԱՏՄ անդամ-երկրների ներմուծման մեջ ՀՀ-ի ներմուծման տեսակարար կշռի մակարդակն աճել է 6.8 տոկոսով, սակայն նույն ժամանակահատվածում ԱՊՀ երկրների և ԵԱՏՄ անդամ-երկրների արտահանման մեջ ՀՀ արտահանման տեսակարար կշռի մակարդակն ավելացել է 2.3 տոկոսով և 1.7 տոկոսով, վերջինիս ավելացման պատճառը 2015 թվականին Հայաստանի անդամակցությունն է ԵԱՏՄ ինտեգրացիոն միավորմանը:

ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

2.1. Գործարար միջավայրի կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմները ՀՀ-ում

Գործարար միջավայրի բարելավումն առաջին հերթին պայմանավորված է տնտեսության ներսում տեղի ունեցող գործընթացներով, որոնց արդյունավետ կառավարումը նպաստում է գործարար ակտիվության բարձրացմանը և տնտեսության զարգացմանը: Ընդ որում առաջնային է գործարար միջավայրի վրա ազդող կառավարման մեխանիզմների մշակումը, որոնք կբերեն գործարար միջավայրում տնտեսվարող սուբյեկտների թվի ավելացման, տնտեսական արդյունավետ լծակների ներդրման, ինչպես նաև պետություն-գործարարություն արդյունավետ հարթակի ձևավորման: Որպես գործարար միջավայրի կառավարման գործիքակազմ՝ աշխատանքում ընտրվել է գործարար միջավայրի վարչարարության հայեցակարգը, որը ենթադրում է կազմակերպությունն արդյունավետ կառավարելու, բարդ առաջադրանքներ վերլուծելու և ռազմավարական որոշումներ կայացնելու ունակություն: Գոր-

ծարար միջավայրի կառավարման մեխանիզմի բովանդակությունն է⁴⁵.


- գործարար միջավայրի վարչարարության սկզբունքները՝ որպես որոշակի կանոնների ամբողջություն, որոնց հիման վրա էլ ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը,

- գործարար միջավայրի վարչարարության գործառությունները կառավարման համակարգի որոշիչ մաս են, որոնք բացահայտում են կառավարման բովանդակությունը. վերջինս հնարավորություն է տալիս բաժանելու կառավարման համակարգի աշխատակիցների գործունեությունը,

- գործարար միջավայրի վարչարարության մեթոդները հնարավորություն են տալիս մշակելու խմբային կամ անհատ աշխատողների վրա նպատակային ազդեցություն գործելու ուղիները: Դրանք միմյանցից տարբերվում են վարչական, տնտեսական, սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական, մոտիվացիոն հատկանիշներով,

- ղեկավարման ոճը տեխնիկական այն մեթոդներն են, որոնք առավել բնորոշ են ղեկավարին, վերջինս էլ կիրառում է ենթակաների հետ փոխհարաբերություններում (գծապատկեր 2.1.1):

⁴⁵ http://www.elib.bsu.by/bitstream/123456789/28321/3/03_BisAdm_PresLec-2012.pdf:



Գծապատկեր 2.1.1. Գործարար միջավայրի վարչարարության համակարգը⁴⁶

⁴⁶ http://www.elib.bsu.by/bitstream/123456789/28321/3/03_BisAdm_PresLec-2012.pdf:

Կազմակերպության կառավարման արդյունավետության բարձրացումը բերում է ընդհանուր կազմակերպության թե՛ ֆինանսական ցուցանիշների, թե՛ անձնակազմի խթանման նոր մոտեցումների բարձրացում: Զարգացած երկրներում SS ոլորտի ընկերություններում մոտիվացիոն լավագույն եղանակներից է սովորական աշխատողը, իր սեփական աշխատանքի վարձատրության ձևից կախված լինելուց բացի նաև այդ ընկերության բաժնետեր է: Այսինքն, եթե նրա կատարած աշխատանքի արդյունավետությունը վերադաս մարմնի կողմից գնահատվում է բարձր, ապա վերադաս մարմինը նրան դարձնում է սեփական բաժնետեր, իսկ բաժնետոմսերից ստացած դիվիդենտները՝ որպես բոնուսային համակարգ, գումարվում են աշխատավարձին: Կազմակերպչական կառուցվածքների կառավարումն այսօր շատ արդիական խնդիր է: Վերջինս ստորաբաժանումների կառավարում է, որը ժամանակակից աշխարհում իրականացվում է արտասպատվիրման ձևով, այսինքն՝ կազմակերպությունը կարող է ոչ մասնագիտացված ուղղություն ունենալ այդ ոլորտում, օրինակ՝ հաշվապահական հաշվառումը, ավտոմատացված ծրագրերի ստեղծումը, որը հնարավորություն է տալիս նվազեցնելու ծախսերը, հարկային բեռը և մասնագիտանալու ընկերության համար այն ոլորտում, որն իրականացնում է ավելի էժան և արդյունավետ: Կառավարման սուբյեկտն այն մարմինն է, որն անմիջապես իրականացնում է կառավարումը հավատարմագրված մենեջերների տեսքով, որոնք նորից կարող են արտասպատվիրվել արտասահմանյան ընկերության կողմից: Միջազգային ընկերությունները կորպորատիվ կառավարման լավագույն փորձ ունեն, որոնց ներթափանցումը հայկական շուկա բերում է կորպորատիվ կառավարման կուլտուրայի բարձրացման, կառավարման պարտականությունների, հարաբերությունների կարգավորման, պայմանագրերի առավել հստակեցման:

ՀՀ-ում գործարար միջավայրի արդյունավետության բարձրացման համար աշխատանքում վերլուծվել են փոքր և միջին

ձեռնարկությունների (ՓՄՁ) դերը և նշանակությունը գործարարության ակտիվության բարձրացման գործում:

Ինչպես զարգացած, այնպես էլ հետանցումային բոլոր երկրներում գերակա խնդիրներից մեկը ՓՄՁ-ի խթանումն է, որոնք ապահովում են հարկային եկամուտների գերակա մասը⁴⁷:

ՀՀ-ում դեռևս առկա են ներդրողների շահերի պաշտպանության, հարկերի վճարման, սեփականության գրանցման, միջազգային առևտուր վարելու, շինարարության թույլատվության հետ կապված վարչարարական այնպիսի խնդիրներ, որոնք խոչընդոտում են գործարար միջավայրի հետագա զարգացումը:

Կարելի է եզրակացնել, որ վարչարարական խնդիրները կարող են ստեղծել անհավասար մրցակցային հնարավորություններ, հատկապես ՓՄՁ-ի համար: Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավման համատեքստում կարևորագույն կառավարման և ռազմավարական առաջընթացներից մեկը 2000 թվականի դեկտեմբերի 5-ին «Փոքր և միջին ձեռնարկության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունումն է⁴⁸: Ի սկզբանե սույն օրենքով սահմանվել են ՓՄՁ-ի սուբյեկտների դասակարգման չափորոշիչները՝ ըստ աշխատողների թվաքանակի, սակայն 2011 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում աշխատողների թվաքանակից բացի ավելացվել են հասույթով և ակտիվների հաշվեկշռային արժեքները: ՀՀ-ում ՓՄՁ դասակարգման գործող չափորոշիչները բերված են 2.1.1 աղյուսակում:

⁴⁷ Kyureghyan A. M., «The Approaches of management for business environment in the RA», Web of scholar N 4 (22), Vol. 3 April RS Global Sp. z O.O., Scientific Educational Center Warsaw, Poland, 2018 p.19:

⁴⁸ «Փոքր և միջին ձեռնարկության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք՝ <http://parliament.am/legislation.php?ID=1952&lang=arm&sel=show>:

ՓՄՁ դասակարգման չափորոշիչները ՀՀ-ում⁴⁹

ՓՄՁ սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակ	Նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթ կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեք
Գերփոքր ձեռնարկություններ	մինչև 10	մինչև 100 մլն դրամ
Փոքր ձեռնարկություններ	մինչև 50	մինչև 500 մլն դրամ
Միջին ձեռնարկություններ	մինչև 250	մինչև 1500 մլն և 1000 մլն դրամ

ՓՄՁ սուբյեկտների քանակը, ըստ գործունեության տեսակների, 2010-2012թթ. իրենց գերակշիռ մասով ներգրավված են եղել մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում, մասնավորապես 2012 թվականին 2010 թվականի համեմատ ՓՄՁ սուբյեկտների քանակը մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում ավելացել է 7626 (միջինը կազմելով 71%) , ընդ որում 75.50%-ը գերփոքր սուբյեկտներ են՝ միջինը կազմելով 392614 (հավելված 1), մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում ՓՄՁ սուբյեկտների քանակն ավելացել է 979-ով և 177-ով (աղյուսակ 2.1.2):

2019 թվականին նախորդ տարվա համեմատ ՓՄՁ սուբյեկտների քանակը մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում ավելացել է 2861-ով, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում՝ 767-ով և 266-ով, իսկ գյուղատնտեսության ոլորտում ՓՄՁ սուբյեկտների քանակը կրճատվել է 83-ով:

⁴⁹ «Փոքր և միջին ձեռնարկության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք՝ <http://parliament.am/legislation.php?ID=:1952&lang=:arm&sel=:show:>

2010-2019թթ. ՀՀ ՓՄՁ սուբյեկտների քանակը
ըստ գործունեության տեսակների⁵⁰

Տեսակի անուն	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	435	525	551	552	485	497	467	580	570	487
Հանքագործական արդյունաբերություն	290	330	356	350	339	308	334	234	314	323
Մշակող արդյունաբերություն	5033	5795	6061	6012	6491	6757	6905	5771	6741	7508
Շինարարություն	1243	1350	1420	1400	1385	1420	1470	1224	1517	1783
Մեծածախ և մանրածախ առևտուր	35750	41114	43376	43376	43628	45004	46810	40183	44093	46954
Փոխադրումներ և պահեստային տնտեսություններ	1908	2472	3772	3727	2573	1303	1229	1739	1016	2095
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	2212	2680	2823	2820	2902	3126	3261	2559	4053	4805
Տեղեկատվություն և կապ	1075	1263	1360	1360	1482	1556	1724	1636	2161	2538
Կրթություն	321	367	400	420	512	523	458	474	488	490
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	1176	1270	1345	1350	1318	1152	1134	1065	1971	2245

⁵⁰ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն, էջ 7

<https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/501749ff43.pdf>,

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ <http://mineconomy.am/hy/419>,

ՀՀ վիճակագրական կոմիտե. «Հրապարակումներ», 2018թ, 2019թ, 2020թ., էջ 6, 6, 6 https://www.armstat.am/file/article/arm_print_version+.pdf,

https://www.armstat.am/file/article/sme_bul_2019_arm_2019.pdf

https://www.armstat.am/file/article/sme_bul_2020_arm.pdf :

2012 թվականին 2010 թվականի համեմատ ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները գրեթե բոլոր ոլորտներում ավելացել են, մասնավորապես մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 159078 մլն դրամով, մշակող արդյունաբերության, փոխադրումներ և պահեստային տնտեսություններ և կապի ոլորտներում համապատասխանաբար՝ 16155 մլն դրամով, 20212 մլն դրամով և 7614 մլն դրամով, իսկ շինարարության ոլորտում ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները կրճատվել են 4444 մլն դրամով (աղյուսակ 2.1.3):

2019 թվականին 2018 թվականի համեմատ ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալներն ավելացել են մեծածախ և մանրածախ առևտրի, հանքագործական արդյունաբերության և մշակող արդյունաբերության ոլորտներում, մասնավորապես մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում՝ 427730 մլն դրամով, հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ 94568 մլն դրամով, մշակող արդյունաբերության ոլորտում՝ 179680 մլն դրամով, ՓՄՁ շինարարության ոլորտում սուբյեկտների շրջանառության ծավալները նվազել են 11913 մլն դրամով, իսկ գյուղատնտեսության ոլորտում ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալները գրեթե չեն փոփոխվել՝ 26415 մլն դրամ:

2012 թվականին 2010 թվականի համեմատ ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծած հարկերն ավելացել են մեծածախ և մանրածախ առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում, մասնավորապես մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծված հարկերն ավելացել են 11313 մլն դրամով, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում՝ 3196 մլն դրամով և 2696 մլն դրամով (աղյուսակ 2.1.4):

2010-2019թթ. ՀՀ ՓՄՁ սուբյեկտների շրջանառության ծավալներն ըստ գործունեության տեսակների (վն դրամ)⁵¹

Տնտեսության ոլորտներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	14525	20926	21315	21320	20443	21554	19969	25606	26148	26415
Հանքագործական արդյունաբերություն	9349	9866	8868	8860	12107	10139	11424	340374	365025	459 593
Մշակող արդյունաբերություն	175250	185907	191405	191420	200354	207468	218496	1158737	1063118	1242 796
Շինարարություն	148484	161649	144040	144020	137228	139855	135651	335602	353842	341 921
Մեծածախ և մանրածախ առևտուր	565362	624112	724440	724000	781408	786823	867413	2347912	2798598	3226 328
Փոխադրումներ և պահեստային տնտեսություններ	43487	52027	63699	63690	50202	49553	55151	219378	271962	293 323
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	36794	37565	46437	46430	37077	44538	75342	116040	148256	201 831
Տեղեկատվություն և կապ	39070	42185	46684	46680	50939	53235	65435	222326	296998	347 992
Կրթություն	6524	6576	5451	5410	7116	8386	9190	7283	9776	9854
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	36116	41889	46000	46020	37381	41248	77645	80267	85444	86251

⁵¹ Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն, էջ 15

<https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/501749ff43.pdf>, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ <http://mineconomy.am/hy/449>, ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հրապարակումներ», 2018թ., 2019թ., 2020թ., էջ 9, 9, 9 https://www.armstat.am/file/article/arm_print_version+.pdf, https://www.armstat.am/file/article/sme_bul_2019_arm_2019.pdf, https://www.armstat.am/file/article/sme_bul_2020_arm.pdf :

2010-2019թթ. ՀՀ ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծված հարկերն ըստ գործունեության տեսակների
(մլն դրամ)⁵²

Տնտեսության ոլորտներ	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1848	1755	2121	2012	2743	2306	1465	1532	1640	1560
Հանքագործական արդյունաբերություն	2414	3005	3633	3600	3435	2602	1109	1202	3614	3200
Մշակող արդյունաբերություն	25841	26487	29037	29030	27417	31095	63586	65521	67301	68417
Շինարարություն	30804	31890	33500	33520	29429	28086	32062	31213	34529	36812
Մեծածախ և մանրածախ առևտուր	52675	55723	63988	63900	72821	93632	114162	114567	127286	143601
Փոխադրումներ և պահեստային տնտեսություններ	6863	7519	8245	8240	10351	8038	8259	8032	8140	9514
Կացություն և հանրային սննդի կազմակերպում	7590	8361	9374	9379	9159	9651	11412	12542	15392	15204
Տեղեկատվություն և կապ	9259	9236	11014	12016	12402	13687	14409	15230	18603	19148
Կրթություն	1572	1588	1617	1642	2597	2756	1727	2021	2465	2734
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	6744	7403	7763	7755	8624	8610	16483	15234	15295	15549

⁵² Հայաստանի փոքր և միջին ձեռնարկության զարգացման ազգային կենտրոն, էջ 18

<https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/501749ff43.pdf>, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն՝ <http://mineconomy.am/hy/449>: ՀՀ վիճակագրական կոմիտե <https://www.armstat.am> :


2019 թվականին 2018 թվականի համեմատ ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծված հարկերն ավելացել են մեծաձախ և մանրաձախ առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում, համապատասխանաբար՝ 16315 մլն, 1116 մլն և 2283 մլն դրամով, մինչդեռ գյուղատնտեսության և հանքագործական արդյունաբերության ոլորտներում ՓՄՁ սուբյեկտների կողմից մուծված հարկերը նվազել են 80 և 414 մլն դրամով:

Այսպիսով, 2018-2019թթ. ՓՄՁ սուբյեկտների և՛ քանակի, և՛ շրջանառության ծավալների, և՛ մուծած հարկերի գերակշիռ մասը ներգրավված են մեծաձախ և մանրաձախ առևտրի ոլորտում:

2.2. ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացներում ինստիտուցիոնալ բարեփոխումները գործարար միջավայրի համատեքստում

ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացներում ինստիտուցիոնալ բարեփոխումների հիմքում կենտրոնական նշանակություն ունի գործարար միջավայրի բարելավումը: Նպատակ ունենալով մակրոտնտեսական ցուցանիշների միջոցով հիմնավորել, թե հատկապես որ ցուցանիշներից է կախված գործարար միջավայրի բարելավումը, ավելին, թե ՀՀ տնտեսության որ ոլորտներում է գործարարությամբ զբաղվելու հակվածությունն առավել բարձր, և թե ինչ ազդեցություն կարող է ունենալ բնակչության կենսամակարդակի վրա: Իրականացվել է գործոնային վերլուծություն:

Ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել է մշակել հասցեական միջոցառումներ՝ ուղղված գործարար միջավայրի բարելավմանը, որը դրական ազդեցություն կունենա բնակչության կենսամակարդակի վրա:



Գծապատկեր 2.2.1. 2004-2017թթ. վարկեր/ՀՆԱ, տրանսֆերտներ/ՀՆԱ և հարկային բեռի շարժրնթացք ՀՀ-ում (%)⁵³

Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 2.2.1-ի տվյալները, 2008 թվականին 2004 թվականի համեմատ վարկեր/ՀՆԱ ցուցանիշն աճել է 5.09 տոկոսով, որի պատճառներից մեկը վարկերի տրամադրման տոկոսադրույքի նվազումն է 9.34 տոկոսով (աղյուսակ 2.2.1), վերջինս էլ հանգեցրել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող ընդհանուր վարկերի ծավալների ավելացման՝ 490989 մլն դրամով, իսկ մեկ շնչին ընկնող վարկի ծավալն ավելացել է 151.544 հազար դրամով: Ինչ վերաբերում է տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշին, 2004 թվա-

⁵³ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2010թ., 2017., Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ, էջ 79, 41, 48 http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_11_5.6.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf: Հրատարակումներ «Հայաստանի ազգային հաշիվներ» հատվածային հաշիվներ, http://www.armstat.am/file/article/hah_08_5.pdf, http://www.armstat.am/file/article/hah_11_7-12.pdf, http://www.armstat.am/file/article/hah_14_7+.pdf, http://www.armstat.am/file/article/hah_17_9.pdf, <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsT1Y2017>:

կանին կազմել է 10.2 տոկոս, իսկ 2008 թվականին այս ցուցանիշն ավելացել է 43.1 տոկոսով:

Աղյուսակ 2.2.1

2004-2017թթ. ընդհանուր վարկերի, մեկ շնչին ընկնող վարկի և տոկոսաաղբյուրի շարժընթացը ՀՀ-ում (մլն դրամ)⁵⁴

	Ընդհանուր վարկեր	Հարկային եկամուտներ	Մեկ շնչին ընկնող վարկ	Մեկ շնչին ընկնող հարկային եկամուտ	Միջին տոկոսաաղբյուր
2004	143506	257520	0.04465028	0.08012446	18.2
2005	194871	312316	0.06056597	0.09706791	17.3
2006	243580	375537.2	0.07562013	0.1165866	17.2
2007	426150	494420.8	0.1320781	0.1532375	16.5
2008	634495	739476.8	0.1961951	0.228657	16.5
2009	735200	642824.3	0.2266547	0.1981762	18.8
2010	949772	718348.3	0.2916901	0.2206162	18.9
2011	1268789	796960.4	0.3881869	0.2438306	17.7
2012	1605680	898415.9	0.5309613	0.2970854	16.0
2013	1798255	1022053	0.5950546	0.3382041	15.0
2014	2188357	1087379	0.7261122	0.3607998	16.3
2015	2119513	1091679	0.7054227	0.3633359	15.4
2016	2436081	1104243	0.8141166	0.3690281	14.4
2017	2500428	1044984	0.8356207	0.3492243	17.0

⁵⁴ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2012թ., 2015թ., 2017թ., էջ 385, 377, 375, 383

<http://www.armstat.am/file/doc/488.pdf>,

<http://www.armstat.am/file/doc/99471508.pdf>

<http://www.armstat.am/file/doc/99493848.pdf>,

<http://www.armstat.am/file/doc/99504418.pdf>: Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ, էջ 79, 41, 48

http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf

http://www.armstat.am/file/article/finansner_11_5.6.pdf,

http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf, Հայաստանի


Հանրապետության Կենտրոնական բանկ՝

<https://www.cba.am/am/sitepages/default.aspx>, Հայաստանի

Հանրապետության հարկային ծառայություն՝

<http://www.petekamutncr.am/Content.aspx?iu=rs:TIY2017>:

2008 թվականին 2004 թվականի համեմատ հարկային բեռի ցուցանիշը 45.3 տոկոսով նվազել է (գծապատկեր 2.2.1), իսկ հարկային եկամուտները նույն ժամանակահատվածում աճել են 48195.6 մլն դրամով, հետևաբար աճել են մեկ շնչին ընկնող հարկային եկամուտները 148.53 հազար դրամով:




Գծապատկեր 2.2.2. 2004-2017թթ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերն ըստ ոլորտների (մլն դրամ)⁵⁵

2017 թվականը 2016 թվականի համեմատ, չնայած վարկերի տրամադրման տոկոսադրույքը բարձրացել է 18.05 տոկոսով, այնուամենայնիվ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ընդհանուր վարկերի ծավալներն ավելացել են 64347 մլն դրամով, մեկ շնչին ընկնող վարկի ծավալներն ավելացել են 21.5041 հազար դրամով, վարկեր/ՀՆԱ ցուցանիշն աճել է

⁵⁵ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2010թ., 2017., Հայաստանի ֆինանսների վիճակագրություն՝ դրամավարկային միջնորդության համակարգի հիմնական ցուցանիշներ, էջ 77, 78, 38, 39, 45-47, http://www.armstat.am/file/article/finansner_07_3.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_11_5.6.pdf, http://www.armstat.am/file/article/finansner_2017_3.pdf, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

1.55 տոկոսով, իսկ հարկային բեռը նվազել է 5.92 տոկոսով: Տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 8.97 տոկոսով, իսկ հարկային եկամուտները նույն ժամանակահատվածում նվազել են 59259 մլն դրամով, ուստի մեկ շնչին ընկնող հարկային եկամուտները նվազել են 19.8038 հազար դրամով, հետևաբար՝ ՀՀ տնտեսության աշխուժացման համար էական նշանակություն ունի վարկավորման տոկոսադրույքի սահմանումը:

2004-2008թթ. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ծավալները բարձր են եղել առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում, մասնավորապես առևտրի ոլորտին տրված վարկերը միջինում կազմել են 57485.0 մլն դրամ, իսկ արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներին տրված վարկերը՝ 46298.5 մլն դրամ և 15677.9 մլն դրամ (գծապատկեր 2.2.2): Համապատասխանաբար վարկավորված ոլորտների համախառն ավելացված արժեքները, ի տարբերություն ոչ վարկավորված ոլորտների համախառն ավելացված արժեքների, բարձր են եղել արդյունաբերության ոլորտում՝ միջինում 462665.2 մլն դրամ, գյուղատնտեսության ոլորտում՝ 502803.1 մլն դրամ, իսկ առևտրի ոլորտում՝ 306778.2 մլն դրամ (հավելված 2): Նույն ժամանակահատվածում սպառողական վարկերը միջինում կազմել են 70873.8 մլն դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 27791.8 մլն դրամ, սպառողական վարկերը 43081.9 մլն դրամով գերազանցել են հիփոթեքային վարկերին (աղյուսակ 2.2.2):



Գծապատկեր 2.2.3. 2004-2017 թթ. ՀՀ տնտեսության ոլորտների համախառն ավելացված արժեքը (մլն դրամ)⁵⁶

2015-2017թթ. առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ծավալները բարձր են եղել հատկապես արդյունաբերության միջինը կազմելով 401428.6 մլն դրամ, առևտրի՝ 365142.2 մլն դրամ և շինարարության՝ 170416.9 մլն դրամ, ոլորտներում: Անդրադառնալով ոլորտների համախառն ավելացված արժեքին հարկ է արձանագրել, որ արդյունաբերության ոլորտի այդ ցուցանիշը միջինում կազմել է 805098.2 մլն դրամ, առևտրի ոլորտում՝ 551484.5 մլն դրամ, իսկ շինարարության ոլորտում՝ 454102.5 մլն դրամ, սակայն նույն ժամանակահատվածում ծառայության և գյուղատնտեսության ոլորտների համախառն ավելացված արժեքները միջինում կազմել են 980327.9 մլն

⁵⁶ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2007թ., 2008թ., 2010թ., 2013թ., 2017թ. «Ազգային հաշիվների համակարգ», էջ 217-222, 220-223, 243-246, 242-247, 245-250, <http://www.armstat.am/file/doc/99450523.pdf>, <http://armstat.am/file/doc/99456328.pdf>, <http://armstat.am/file/doc/99461748.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99477463.pdf>, <http://armstat.am/file/doc/99504388.pdf>, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

դրամ և 850526.5 մլն դրամ (գծապատկեր 2.2.3): Վերջինիս համախառն ավելացված արժեքի բարձր լինելը բացատրվում է նրանով, որ գոյություն ունեն մոտ 300 հազար ֆերմային տնտեսություն, որոնց կեսն իրականացնում է ոչ ֆորմալ գործունեություն:

Աղյուսակ 2.2.2

2004-2017թթ, ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տեսակները (մլն դրամ)⁵⁷

	Սպառողական վարկեր	Հիփոթեքային վարկեր	Այլ
2004	3276.5	6065.333	386.25
2005	43533.92	6065.333	3738.167
2006	58450.08	17321	5259.75
2007	92308.33	37930	10573.25
2008	156800.4	71577.75	26861
2009	144900.7	83782.25	35588.17
2010	146405.3	84551.08	43907.67
2011	189458.6	98078.67	56488.58
2012	260073.9	118990.9	59619.67
2013	330234.3	134586	96220.83
2014	406090.4	152554.8	114399
2015	425257.3	172855.3	132079.6
2016	425772.8	179622.6	136474.3
2017	510927.4	227310.7	218925.7

Նույն ժամանակահատվածում սպառողական վարկերը միջինում կազմել են 453985.8 մլն դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 193262.8 մլն դրամ: Սպառողական վարկերը գերազանցել են 260723 մլն դրամով, ինչը վկայում է այն մասին, որ բնակչությունը նույնիսկ իր տարրական պահանջմունքները

⁵⁷ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ՝ <https://www.cha.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

բավարարելու համար դիմում է վարկավորման գործընթացին (աղյուսակ 2.2.2):

Առևտրային բանկերը 2015-2017 թթ. վարկավորել են արդյունաբերության, առևտրի և շինարարության ոլորտները, սակայն վերջիններիս համախառն ավելացված արժեքները ցածր են եղել այն ոլորտներից՝ ծառայություն, գյուղատնտեսություն, որոնց առևտրային բանկերը չեն վարկավորել, հետևաբար՝ վերոնշյալ ոլորտների վարկավորումը կարող է բերել զբաղվածության մակարդակի բարձրացում, նոր աշխատատեղերի ավելացում, արտագաղթի կրճատում, տեղական արտադրության արտահանման ավելացում, նոր շուկաների գրավում, ինչպես նաև երկրի վարկանիշի բարձրացում:

2010 թվականին 2008 թվականի համեմատ տնտեսական ակտիվության մակարդակն ավելացել է 2.85 տոկոսով, սակայն սպառողական գների ինդեքսը նվազել է 0.73 տոկոսով (աղյուսակ 2.2.3), միաժամանակ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ևս նվազել է 762 ԱՄՆ դոլարով (տե՛ս 3.2 ենթահարցը) այսինքն՝ գների մակարդակի իջեցումը նպաստել է միաժամանակ առաջարկի և պահանջարկի ավելացմանը, որն էլ բարելավել է ՏԱՑ-ի քանակական աճը:

2016 թվականին 2014 թվականի համեմատ տնտեսական ակտիվության մակարդակը նվազել է 2.37 տոկոսով, իսկ սպառողական գների ինդեքսը՝ 4.27 տոկոսով, միաժամանակ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն նվազել է 340 ԱՄՆ դոլարով, իսկ 2017 թվականին նախորդ տարվա համեմատ տնտեսական ակտիվության մակարդակի էական փոփոխություն չի արձանագրվել (միջինը կազմելով 61.5%), սակայն սպառողական գների ինդեքսն ավելացել է 2.23 տոկոսով, որը սակայն չի հանգեցրել բնակչության կենսամակարդակի բարձրացման, հետևաբար՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա ազդում է ոչ միայն գների մակարդակը, այլ նաև նշված գործոնները նույնպես (հարկային բեռ, տոկոսադրույք, վարկեր/ՀՆԱ ցուցանիշ, տրանսֆերտներ/ՀՆԱ ցուցանիշ):

2004-2017թթ. տնտեսական ակտիվության մակարդակը և սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում (%)⁵⁸

	Տնտեսական ակտիվության մակարդակ	Սպառողական գների ինդեքս
2004	58.6	107
2005	57.7	100.6
2006	55.9	102.9
2007	54.5	104.4
2008	59.5	109
2009	59.2	103.4
2010	61.2	108.2
2011	63	107.7
2012	62.7	102.6
2013	63.4	105.8
2014	63.1	103
2015	62.5	99.9
2016	61.6	98.6
2017	61.5	100.8

Այսպիսով, 2014-2017թթ. արձանագրվել է միաժամանակ 3 ցուցանիշների անկում՝ տնտեսական ակտիվության մակարդակը 2.37 տոկոսով, սպառողական գների ինդեքսը՝ 4.27 տոկոսով, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 340 ԱՄՆ դոլարով: Իրականացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2015-2017թթ. արդյունաբերության, առևտրի և շինարարության վարկավորված ոլորտների համախառն ավելացված արժեքները ցածր են եղել այն ոլորտներից՝ ծառայություն, գյուղա-

⁵⁸ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., «Զբաղվածություն», էջ 50, 52, 57, 51
<http://www.armstat.am/file/doc/474.pdf>
<http://armstat.am/file/doc/99461553.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99493603.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99504348.pdf>,
http://www.armstat.am/file/article/sv_11_17a_130.pdf:

տնտեսություն, որոնց առևտրային բանկերը չեն վարկավորել: Այսինքն՝ թվարկված ոլորտների վարկավորումը եղել է աննպատակ, որոնցում թողարկված ապրանքները եղել են ոչ մրցունակ: Ուստի տնտեսության զարգացման համար առաջարկվել է վերանայել ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարությունը

1. Հարկային արտոնություններ տալ հատկապես այն ոլորտներին, որոնք ունեն տնտեսության կայուն զարգացման, զբաղվածության մակարդակի բարձրացման, եկամուտների ավելացման ներուժ, այսինքն, որոնք բնակչության համար սոցիալական նշանակության ոլորտ են: Որպես այդպիսին կարող են հանդիսանալ վերամշակող արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, հագուստի արտադրությունը, այսինքն՝ հատկապես այն ոլորտներում, որոնց համախառն ավելացված արժեքը բարձր է: ՀՀ-ում զբաղվածությունը տեղի է ունենում վարկերի ձեռքբերման հաշվին, ուստի ՀՀ տնտեսության աշխուժացման համար էական նշանակություն ունի վարկավորման տոկոսադրույքի սահմանումը, հատկապես վերջինիս նվազեցումը կրերի սոցիալական խնդիրների լուծման, ինչպես նաև կիթանի նոր բիզնես ծրագրերի իրականացումը:

2. Իրականացնել հարկային բեռի օպտիմալացում, հավասար պայմաններ ստեղծել գործող բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար:

3. Շուկայական մուտքի արգելքների և ազատ մրցակցության «սահմանափակության» վերացում արտահանվող ապրանքների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 3. ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. Տնտեսական զարգացման առաջնա- հերթությունների գնահատման մեխանիզմները

ՀՀ գործարար միջավայրի բարելավման համար անհրա-
ժեշտ են այնպիսի մեխանիզմներ, որոնք կարող են ապահովել
հարկային համակարգի միջազգայնորեն մրցունակության
բարձրացում, նորաստեղծ ընկերություններում ներդրումների
հոսքերի ավելացում, կորպորատիվ կառավարման համա-
կարգի ներդրում տնտեսության իրական հատվածում, կա-
ռուցվածքային վերափոխումների և ենթակառուցվածքների
արդիականացման խնդիրների լուծում, ինչպես նաև արտա-
դրություն-վերամշակում-իրացման շուկա շղթայի լիարժեք
գործարկման նոր հարթակի ձևավորում, ինչն էլ կնպաստի
համախառն ներքին արդյունքի բարձրացմանը: Համեմատելով
ՀՀ առանձին ոլորտների տեսակարար կշիռները՝ ՀՆԱ-ում
հիմնավորվել է, որ հատկապես գյուղատնտեսությունը, մեծ
տեսակարար կշիռ ունենալով վերջինիս կառուցվածքում
(հավելված 4), ինչպես նաև այս ոլորտի արտադրանքի
«իրացման» մեխանիզմը պարենամթերքի արտադրությունն է,
հարկ է փաստել, որ 2019 թվականի երկրորդ եռամսյակին
առաջին եռամսյակի համեմատ համախառն ներքին արդյունքը
և պարենամթերքի արտահանումն ավելացել են՝ 239558 մլն
դրամով և 7162.1 մլն դրամով, միաժամանակ հարկային բեռը
նվազել է 15.56%-ով (հավելված 3):

Գրքում մշակվել և առաջարկվել է ռեգրեսիոն բանաձև, որը գործնականում հաշվարկվել է համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ցուցանիշների համար

$$Y = a_0 + a_1 EX_a + a_2 TB + \varepsilon_i \quad (3.1.1) \quad .$$

որտեղ

Y – համախառն ներքին արդյունքն է

(այսուհետև՝ ՇՆԱ, մլն դրամ)

EX_a – պարենամթերքի արտահանումն է (մլն դրամ)

TB – հարկային բեռն է (որը հաշվարկվել է հարկեր/ ՇՆԱ հարաբերակցությամբ)

a_0, a_1, a_2 – հաստատուն մեծության և անկախ


փոփոխականների էլաստիկության գործակիցներն են

ε_i – պատահական սխալի մեծությունն է:


Վերլուծության համար դիտարկվել են 1997-2018թթ. համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի տարեկան պաշտոնական վիճակագրական տվյալները: Ներկայացված տնտեսաչափական մոդելում վիճակագրական շարքերը 22-ն են, իսկ դա նշանակում է, որ ստացված արժեքները գրեթե մոտ են իրականությանը:

Նշված մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների եղանակով՝ Eviews 9⁵⁹ համակարգչային ծրագրային հնարավորությունից՝ իրականացվել է համապատասխան ռեգրեսիոն վերլուծություն, սակայն մինչ մոդելի գնահատելը տվյալները լոգարիթմել ենք, որպեսզի խուսափենք կեղծ բազմագործոն գծային ռեգրեսիա ստանալուց (գծապատկեր 3.1.1):


⁵⁹ Eviews-ը Micro TSP փաթեթի Windows տարբերակն է, որը պարունակում է, զարգացած «հուշում» (help), որը, ըստ էության, էկոնոմետրիկ մեթոդների ուղեցույց է: Eviews- ի մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ հետևյալ էլ. հասցեում՝ <http://www.eviews.com/home.html>:



GDP



EX



TB

Գծապատկեր 3.1.1. 1997-2018թթ. համախառն ներքին արդյունքի, պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ցուցանիշների դինամիկան ՀՀ-ում (սկզբնական տարիները)

⁶⁰ Կազմվել է Eviews- էկոնոմետրիկ մեթոդի ուղեցույցի միջոցով:

Ռեգրեսիոն մոդելի գնահատման արդյունքներն արտացոլված են աղյուսակ 3.1.1-ում, որտեղ ներկայացված են a_0 , a_1 , a_2 , գործակիցները և դրանց վիճակագրական հատկությունները՝ t -վիճականի, F -վիճականի $Prob.$ ⁶¹, որոնք հնարավորություն են տալիս ստուգելու գնահատված գործակիցների վիճակագրական արժեքականության, կամ որ նույնն է՝ կախյալ ու անկախ փոփոխականների միջև գծային կախվածության առկայության մասին վարկածը: Գնահատված գործակիցների արժեքականությունը ստուգելու համար (Ստյուդենտի t -վիճականու դեպքում) դրվում է զրոյական վարկած այն մասին, որ գծային ռեգրեսիայի տվյալ գործակիցը հավասար է զրոյի, օրինակ՝ $H_0: \beta^1 = 0$, մրցակցող վարկածն է՝ $H_1: \beta^1 \neq 0$: Վարկածը ստուգվում է t վիճականու հաշվարկված արժեքը՝ արժեքականության α մակարդակում Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքի հետ համեմատելու միջոցով: Եթե տեղի ունի՝ $|t| > t_{n-p, 1-\alpha/2}$ (3.1.2)⁶², ապա H_0 -ն մերժվում է տվյալ α (5% սխալվելու հավանականությամբ) արժեքականության մակարդակում: Նշանակում է՝ β^1 -ը արժեքական է արժեքականության α մակարդակում, այսինքն՝ նշանակալիորեն տարբերվում է զրոյից, և համապատասխան β -ն բացատրում է կախյալ փոփոխականի փոփոխությունը: Հակառակ դեպքում H_0 -ն չի կարող մերժվել տվյալ α (5% սխալվելու հավանականությամբ) արժեքականության մակարդակում: Նշենք, որ այստեղ $t_{n-p, 1-\alpha/2}$ -ը Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքն է α արժեքականության մակարդակի համար՝ $n - p$ ազատության աստիճանով (որտեղ n -ը դիտարկումների քանակն է, իսկ p -ն՝ գնահատվող պարամետրերի/գործակիցների թիվը)⁶³: Eviews-ում Ստյուդենտի

⁶¹ И.И.Елисеевой. Эконометрика:Учеб./под ред -М.: 2009, с. 25-28.

⁶² Ջրբաշյան Ն. «Էկոնոմետրիկ մոդելավորումը EViews փաթեթի օգտագործմամբ», ուսումնամեթոդական ձեռնարկ, «ՆՈՐ - ԴԱՐ» հրատ., Երևան, 2013թ., 48 էջ:

⁶³ Նույն տեղում:

բաշխում ունեցող պատահական մեծության կրիտիկական արժեքը ստանալու համար դրա գլխավոր պատուհանի հրամանների տողում կարելի է գրառել՝ =@qtdist(v,n-p), որտեղ $v=1-\alpha/2$, իսկ $n-p$ -ն ազատության աստիճանն է: Enter կոճակը սեղմելուց հետո գլխավոր պատուհանի կարգավիճակի տողում կերևա գրառում՝ Scalar=..., որն էլ հենց Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքն է⁶⁴:

F վիճականու միջոցով ստուգվում է ռեգրեսիայի ամբողջ հավասարման վիճակագրական արժեքականությունը, կամ միասին վերցրած ռեգրեսիայի բոլոր գործակիցների (բացի ազատ անդամից)՝ զրո լինելու մասին վարկածը: Դրվում է գրոյական վարկած՝ $H_0 : \beta_1 = \beta_2 = \dots = \beta_{p-1} = 0$, որը ստուգվում է F վիճականու արժեքը Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության $F_{կրիտ}$ արժեքի հետ համեմատելու միջոցով: Վերջինս բնութագրվում է α արժեքականության մակարդակով և $(p-1, n-p)$ ազատության աստիճաններով, որտեղ p -ն գնահատվող պարամետրերի/գործակիցների քանակն է, իսկ $n-p$ -ը՝ դիտարկումների քանակը: Եթե $F > F_{կրիտ}$, H_0 -ն մերժվում է տվյալ α արժեքականության մակարդակում, ինչը նշանակում է, որ ռեգրեսիայի հավասարումն արժեքական է, այսինքն՝ անկախ փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի փոփոխությունը: Հակառակ դեպքում α արժեքականության մակարդակում այն չի կարող մերժվել⁶⁵: Eviews-ում Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության սահմանային արժեքը ստանալու համար դրա գլխավոր պատուհանի հրամանների տողում պետք է գրառել՝ = @qfdist(v,k1,k2), որտեղ

⁶⁴ Մոդելում $n=22$, $p=3$, $n-p=19$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=1-\alpha/2$ ՝ $v=0.975$, Ստյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ 2.09:

⁶⁵ Ջրբաշյան Ն. «Էկոնոմետրիկ մոդելավորումը EViews փաթեթի օգտագործմամբ», ուսումնամեթոդական ձեռնարկ, «ՆՈՒ - ԴԱՐ» հրատ., Երևան, 2013թ., 53 էջ:

$v=1-\alpha$, $k1=p-1$, $k2=n-p$: Enter կոճակը սեղմելուց հետո գլխավոր պատուհանի կարգավիճակի տողում կերևա գրառում՝ Scalar=..., որն էլ հենց Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող սահմանային արժեքն է⁶⁶:

Բացի այդ, մոդելի որակական հատկանիշներն ըմբռնելու համար տրված են հետևյալ ցուցանիշները՝ R^2 , ճշգրտված R^{267} :

Աղյուսակ 3.1.1

Մոդելի գնահատման արդյունքները⁶⁸

Գործակից	t-վիճականի	Prob.	R^2	Ճշգրտված R^2
7.723782	15.99415	0.0000	0.933193	0.926161
0.589499	16.24291	0.0000		
-0.365368	-2.898582	0.0092		

Վերլուծության արդյունքները ևս հաստատում են, որ դիտարկվող գործոնների և ՀՆԱ-ի միջև գոյություն ունի նշանակալի փոխկապվածություն, քանի որ դետերմինացվածի գործակիցը (R^2) հավասար է 0.93-ի, այսինքն՝ կախյալ փոփոխականի փոփոխության շուրջ 93%-ը բացատրվում է ռեգրեսիայով, իսկ մնացած 7%-ը՝ պատահական սխալներով: Մա նշանակում է, որ 93%-ի դեպքում ՀՆԱ-ի տատանումները կարող են բացատրվել մեր կողմից դիտարկվող գործոնների ազդեցությամբ, իսկ դետերմինացվածի ճշգրտված գործակիցը (ճշգրտված R^2) հավասար է 0.92-ի, այսինքն՝ 92% ինչը ցույց է տալիս, թե դետերմինացիայի ճշգրտման գործակիցն ինչպիսի ազդեցություն է ունեցել դետերմինացիայի գործակցի վրա, և քանի որ գնահատված մոդելում դետերմինացիայի ճշգրտված

⁶⁶ Մոդելում $n=22$, $p=3$, $\alpha=0.05$ արժեքականության մակարդակի դեպքում $v=0.95$ $k1=2$, $k2=19$, Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ $F_{կրիտ} = 3.52$:

⁶⁷ Я.Р.Магнус, П.К. Катывшев, А.А.Пересецкий, Эконометрика, издательство «Дело», М. 2004, с. 67,

⁶⁸ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

գործակիցը մոտ է դետերմինացիայի գործակցին, ուստի այն նշանակում է, որ ունենք «որակյալ» ռեգրեսիոն վերլուծություն, ինչպես նաև գնահատված գործակիցների արժեքականությունը ստուգող Մոյուդենտի t-վիճականու պայմանը ևս բավարարված է, այսինքն՝ Մոյուդենտի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքի դեպքում՝ 2.09, ինչպես նաև 3.1.2 հավասարման հետ համեմատելով, պետք է նշել, որ β^0 β^1 β^2 -ը արժեքական է՝ արժեքականության α մակարդակում (5% սխալվելու հավանականությամբ), քանի որ $\beta^0=115.99415I>2.09$, $\beta^1 =116.24291I>2.09$, $\beta^2=I-2.898582I>2.09$:

Ռեգրեսիայի ամբողջ հավասարման վիճակագրական արժեքականությունը ստուգող F վիճականու պայմանը ևս բավարարված է, այսինքն՝ Ֆիշերի բաշխում ունեցող պատահական մեծության փնտրվող կրիտիկական արժեքը՝ $F_{կրիտ}=3.52$, փոքր է F վիճականու արժեքից՝ $F=132.7014$ (հավելված 5), հետևաբար՝ հավասարումն արժեքական է արժեքականության α մակարդակում (5% սխալվելու հավանականությամբ):

Արդյունքում գնահատված գծային ռեգրեսիայի հավասարման արժեքները արտացոլվել են՝

$$Y=7.723782+0.589499EX-0.365368TB \text{ (3.1.3)}$$

Արդյունքում (3.1.3) տնտեսաչափական մոդելի և մաթեմատիկական գործիքակազմի կիրառության միջոցով կարելի է տալ տնտեսագիտական հիմնավորում.


1. գյուղատնտեսության ոլորտում արտահանման ծավալները (EX_s) ավելացնում են համախառն ներքին արդյունքի (Y) 0.58 տոկոսային կետի չափով:

2. ներկայացված անկախ փոփոխականներից հարկային բեռն (TB) ունեցել է բացասական ազդեցություն համախառն ներքին արդյունքի (Y) վրա 0.36 տոկոսային կետի չափով. վերջինիս բացասական ազդեցությունը բացատրվում է նրանով,

որ գյուղատնտեսության ոլորտը բավականին խնդիրներ ունի կապված պետական աջակցության անբավարար մեխանիզմների զարգացածության առումով:

Ենթակառուցվածքների թերզարգացածությունը, գյուղատնտեսական կոլեկտիվների ոչ մասսայականությունը, ֆինանսավորման մեխանիզմների անհասանելիությունը, բնակլիմայական պայմանները, ապահովագրական պայմանների բացակայության գործոնները բերում են գյուղատնտեսական ոլորտի ոչ շահութաբեր լինելու հանգամանքին, թեև այս ոլորտը հարկերից ազատված է կամ գործում են հարկային արտոնություններ, ինչն էլ հիմնավորվել է հաշվարկներով, որ հարկային բեռի մեկ տոկոս կետի փոփոխությունը բերել է համախառն ներքին արդյունքի (Y) 0.36 տոկոսային կետի նվազման⁶⁹: Այդ առումով առաջարկվել է իրականացնել հասցեական միջոցառումներ, որոնք նոր հարթակներ կձևավորեն պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցության համար (զծապատկեր 3.1.2):

⁶⁹ Կյուրեղյան Ա. Մ. Տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմները գործարար միջավայրի բարելավման համատեքստում, Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ: Գիտական հոդվածների ժողովածու - 1(2) - Գ.Վ. Պլեխանովի անվ. ՌՏՀ Երևանի մասնաճյուղի հրատ., Երևան, 2019թ., էջ 212:




Գծապատկեր 3.1.2. Պետություն-բիզնես-քաղաքացիական հասարակություն համագործակցության մեխանիզմը⁷⁰

⁷⁰ Կազմվել է հեղինակների կողմից:

Գործարար միջավայրի վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են փոխարժեքով պայմանավորված արտահանումը և ներմուծումը:

Փոխարժեքով պայմանավորված՝ 2018 թվականին 2006 թվականի համեմատ արտահանման և ներմուծման ծավալներն ավելացել են, մասնավորապես արտահանման ծավալն ավելացել է 544464.5 մլն դրամով, իսկ ներմուծման ծավալը՝ 1354615.9 մլն դրամով (տե՛ս գծապատկեր 3.1.3)



Գծապատկեր 3.1.3. 2006-2020թթ. արտահանման, ներմուծման և փոխարժեքի շարժրնթացը ՀՀ-ում (մլն դրամ)⁷¹

2020 թվականին նույն պատճառով 2019 թվականի համեմատ արտահանման ծավալը նվազել է 1483211 մլն դրամով, դրամ/դոլար փոխարժեքային կուրսերի տատանումներն առավել շահեկան են դարձրել ոչ թե սպրանքների արտահանումը,

⁷¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ, «Հայաստանի ազգային հաշիվներ», էջ 56, 59, 69 https://www.armstat.am/file/article/hah_12_6.pdf, https://www.armstat.am/file/article/hah_16_6.pdf, https://www.armstat.am/file/article/hah_18_6.pdf, <https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>, ՀՀ Կենտրոնական բանկ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>:

այլ դրանց ներմուծումը, այսինքն՝ «Էժանացված դոլարային հոսքերի պայմաններում», երբ Համաշխարհային շուկայում տեղի են ունեցել ապրանքների գների իջեցում, այն նպաստավոր է դարձել, որ հայ գործարարներն ապրանքներ ներմուծեն ՀՀ՝ դրանք առավել բարձր գնով վաճառելու ակնկալիքով: Նույն ժամանակահատվածում փոխարժեքի փոփոխությունը ներմուծման ծավալը նվազեցրել է 1353696,8 մլն դրամով, ինչը թույլ է տալիս հանգել այն հետևության, որ արտահանումը ՀՀ տնտեսության վրա նշանակալի ազդեցություն դեռևս չունի:

Վերևում նշված վերլուծության արդյունքները համակարգվել են աղյուսակ 3.1.2 - 3.1.3-ում:

Աղյուսակ 3.1.2

Պարենամթերքի արտահանման և հարկային բեռի ազդեցությունը համախառն ներքին արդյունքի վրա⁷²

ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ	
Դրական ազդեցություն	պարենամթերքի արտահանում
Բացասական ազդեցություն	հարկային բեռ
Առակա դիսկեր	<ol style="list-style-type: none"> 1. պետական աջակցության անբավարար մեխանիզմների առկայություն, 2. ենթակառուցվածքների թերզարգացածություն, 3. գյուղատնտեսական կոլեկտիվների ոչ մասսայականություն, 4. ֆինանսավորման մեխանիզմների անհասանելիություն, 5. բնակլիմայական պայմաններ, 6. ապահովագրական պայմանների բացակայություն կամ թանկ լինելը:
Կանխարգելիչ միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> 1. հարկային արտոնությունների տրամադրում, 2. մաքսային ընթացակարգերի պարզեցում, 3. օրենսդրական դաշտի կայունացում:

⁷² Կազմվել է հեղինակների կողմից:

Ըստ աղյուսակ 3.1.2-ի՝ ՀՆԱ-ի վրա դրական ազդեցություն ունի պարենամթերքի արտահանումը, սակայն բացասական ազդեցություն ունի հարկային բեռը, ուստի առաջարկվում է կիրառել այնպիսի գործիքակազմ (հարկային արտոնությունների տրամադրում, մաքսային ընթացակարգերի պարզեցում, օրենսդրական դաշտի կայունացում), որոնք կնպաստեն պետություն–բիզնես–քաղաքացիական հասարակություն արդյունավետ համագործակցությանը:

Աղյուսակ 3.1.3

Արտահանման և ներմուծման վրա ազդող ռիսկերը և կանխարգելիչ միջոցառումները⁷³

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ	ՆԵՐՄՈՒԾՈՒՄ
Առկա ռիսկեր	<ol style="list-style-type: none"> 1. «Եժանացված դոլարային հոսքերի պայմաններում» ներմուծված ապրանքի գնի բարձրացում, 2. տնտեսության վրա արտահանման ոչ նշանակալի ազդեցություն, 3. միջազգային համագործակցության կապերի նվազում, 4. երկրի վարկանիշի նվազում, 5. միջազգային շուկաներում տեղական արտադրանքի ոչ ճանաչելիություն, 6. պետական բյուջեում եկամուտների հոսքերի կրճատում: 	<p>ներմուծման դիվերսիֆիկացում և տնտեսության կենտրոնացվածություն՝ օլիգոպոլ շուկաների գերակայությամբ:</p>
Կանխարգելիչ միջոցառումներ	<ol style="list-style-type: none"> 1. դրամ/դոլար փոխարժեքային կուրսի ոչ հաճախակի տատանում, 2. մաքսային ընթացակարգերի պարզեցում: 	<p>արտահանման խթանում փոխարժեքի կուրսի փոփոխման պայմաններում:</p>

⁷³ Կազմվել է հեղինակների կողմից:

Ըստ աղյուսակ 3.1.3-ի՝ ՀՀ-ում փոխարժեքի փոփոխությունը նվազեցրել է արտահանումը փոխարժեքով պայմանավորված այնպիսի ռիսկերի հետ, ինչպիսիք են «եժանացված դոլարային հոսքերի պայմաններում» ներմուծված ապրանքի գնի բարձրացումը, միջազգային համագործակցության կապերի նվազումը, երկրի վարկանիշի նվազումը, պետական բյուջեում եկամուտների հոսքերի կրճատումը, որոնց մեղմացման համար առաջարկվել է իրականացնել այնպիսի կանխարգելիչ միջոցառումներ, ինչպիսիք են՝ դրամ/դոլար փոխարժեքային կուրսի տատանումների մեղմելը, մաքսային ընթացակարգերի պարզեցումը, որոնք կխթանեն արտահանումը:


3.2. Տնտեսական զարգացման առաջնահերթությունների համակարգման մեխանիզմները մակրոտնտեսական ցուցանիշների համատեքստում

Տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման տեսանկյունից առանձնացվել են այն մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք էական և նշանակալի ազդեցություն են ունենում գործարար միջավայրի զարգացման վրա: Այդ համատեքստում դիտարկվել են հետևյալ ցուցանիշները՝

1. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն,
2. տնտեսական ակտիվությունը,
3. տնային տնտեսությունների դրամական եկամուտները,
4. տնային տնտեսությունների սպառողական ծախսերը,
5. զբաղվածությունն ըստ սեռատարիքային կազմի,
6. հարկային բեռը:

Հայտնի է, որ բնակչության կենսամակարդակը բնութագրող մակրոտնտեսական հիմնական ցուցանիշներից է բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, որը ցույց է տալիս տվյալ երկրի զարգացման և բարեկեցության աստիճանը: 2005-2019թթ. ՀՀ-ում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն եղել է բավականին ցածր, որը կազմել է միջինում 3199.3 ԱՄՆ դոլար:

Ըստ գծապատկեր 3.2.2-ի տվյալների՝ 2018 թվականին 2005 թվականի համեմատ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2499 ԱՄՆ դոլարով ավելացել է, սակայն անդրադառնալով 2009 թվականի՝ ճգնաժամի տարուն՝ հարկ է նշել, որ Հանրապետությունում գրանցվել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի անկում՝ կազմելով 2666 ԱՄՆ դոլար, որի հետևանքով տեղի է ունեցել բնակչության կենսամակարդակի անկում՝ խորացնելով աղքատության մակարդակը (31.4%)⁷⁴:



Գծապատկեր 3.2.1. 2005-2019թթ. տնտեսական աճի Հայաստանում (%)⁷⁵

2019 թվականին 2018 թվականի համեմատ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելացել է 593 ԱՄՆ դոլարով, այսինքն՝ ցուցադրել է ավելանալու միտում, եթե այս տարիների կտրվածքով այն համադրենք տնտեսական աճի հետ, ապա 2018 թվա-

⁷⁴ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2010թ.
<http://www.armstat.am/am/?nid=82&year=2010>:


⁷⁵ ՀԲ-ի «World DataBank World Development Indicators» անցանց տվյալների բազա.
<https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=AM>:

կանին տնտեսությունում գրանցվել է 5,8 տոկոս, իսկ 2019 թվականին՝ 7,6 տոկոս տնտեսական աճ (գծապատկեր 3.2.1): Այդ ցուցանիշների միջև գրանցվել են համարժեքության «խախտումները», որոնք ունեն երկկողմանի բնույթ: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են՝ աղքատության բարձր մակարդակը, սովեթային տնտեսությունը, միգրացիոն հոսքերը և այլն:

Անդրադառնալով տնտեսական ակտիվության ցուցանիշին⁷⁶ (այսուհետև՝ SU3) 2018 թվականի առաջին 5 ամսում՝ հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստանում գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի 2,7% աճ, իսկ ամսական կտրվածքով մայիսին ապրիլի համեմատ SU3-ը գրանցել է 7,1% աճ, 2018թ. հունվարին՝ 2017թ. հունվարի համեմատ աճել է 1,3%-ով⁷⁷: Մասնավորապես 2019 թվականի հունվար-մայիսին վերջինիս աճի տեմպն արագացել է: Այն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրական արտահայտությամբ աճել է 5.5%-ով:

⁷⁶ SU3-ը երկրի տնտեսությունում արտադրանքի թողարկման իրական ծավալի փոփոխության ամսական ագրեգացված ցուցանիշ է, որը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

⁷⁷ Ելուրեղյան Ա. Մ. Գործարար միջավայրի բարելավման մոտեցումները Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում, Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ, Գիրք 11, «ՆՈՐ-ԴԱՐ» հրատ., Երևան 2018թ., էջ 79:



Գծապատկեր 3.2.2 2005-2019թթ. բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը ՀՀ-ում (ԱՄՆ դոլար)⁷⁸


Հետևաբար՝ տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի տեմպերն արագացել են, որը շարունակվելու դեպքում 2016 թվականին տնտեսական աճը բյուջեով նախատեսված կկազմեր 2.4%⁷⁹: Սակայն 2016 թվականին փաստացի տնտեսական աճը կազմել է 0.2%, իսկ 2019 թվականին՝ 7,6%, այսինքն՝ որքան էլ որ ՀՀ ԱՎԾ-ն հրապարակի, թե երկրում տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է, միննույնն է, այն ՀՀ քաղաքացու տնտեսական բարեկեցությունը չի բարելավում:

ԵԱՏՍ երկրները մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի դինամիկան 2005-2019թթ. ինտեգրացիոն ներկա փուլում արձանագրվել են հետևյալ արդյունքները. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն բոլոր երկրներ-

⁷⁸ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ, «Հայաստանի ազգային հաշիվներ», 1998-2020թթ., «Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշներ», էջ 27, 35 http://armstat.am/file/article/hah_14_2+.pdf
http://armstat.am/file/article/hah_17_2.pdf,
<https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>,
[https://www.imf.org/external/pubs/ft/weo/2018/01/weodata/weoselco.aspx?g=2001&sg=All+countries:](https://www.imf.org/external/pubs/ft/weo/2018/01/weodata/weoselco.aspx?g=2001&sg=All+countries;)

⁷⁹ http://www.parliament.am/committee_docs/5/FV/TEXT2017.pdf:

քում ավելացել է (Ռուսաստան՝ 6233 ԱՄՆ դոլարով, Բելառուս՝ 3185 ԱՄՆ դոլարով, Ղազախստան՝ 6027 ԱՄՆ դոլարով, Հայաստան՝ 3092 ԱՄՆ դոլարով), սակայն միաժամանակ 2009 թվականին տնտեսական անկումն էականորեն կրճատել է նաև մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն. Ռուսաստանում 2009 թվականին 2008 թվականի համեմատ այն նվազել է 3290 ԱՄՆ դոլարով, Ղազախստանում՝ 1233 ԱՄՆ դոլարով, Բելառուսում՝ 1196 ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ-ում՝ 940 ԱՄՆ դոլարով, այսինքն՝ վերլուծությունը ցույց է տալիս, որ 2009 թվականին այս ցուցանիշի էական գախավիժում է նկատվել Ռուսաստանում (գծապատկեր 3.2.3):




Գծապատկեր 3.2.3. 2005-2019թթ. բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի դինամիկան ԵԱՏՄ երկրներում (ԱՄՆ դոլար)⁸⁰

2019 թվականին 2018 թվականի համեմատ արձանագրվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճ, Ռուսաստանում՝ 1338 ԱՄՆ

⁸⁰ ՀՀ Վիճակագրական կոմիտե, հրապարակումներ. «Հայաստանի ազգային հաշիվներ», 1998-2017թթ., «Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշներ», էջ 27, 35 http://armstat.am/file/article/hah_14_2.pdf http://armstat.am/file/article/hah_17_2.pdf: ԱՄՆ-ի «World Economic Outlook» տվյալների բազա: <https://www.imf.org/external/pubs/ft/weo/2018/01/weodata/weose1co.aspx?g=2001&sg=All+countries>:

դրարով, Բելառուսում՝ 540 ԱՄՆ դրարով, ինչպես նաև միա-
ժամանակ Հայաստանում ավելացել է 593 ԱՄՆ դրարով, իսկ
Ղազախստանում՝ 940 ԱՄՆ դրարով:




Գծապատկեր 3.2.4. 2005-2019թթ. ՀՀ տնային տնտեսությունների
դրամական եկամուտները, զուտ տրանսֆերտները և սպառողական
ծախսերը (մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ)⁸¹

⁸¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ. «Հայաստանի սոցիալա-
կան պատկերը և աղքատությունը», մաս 2. Հայաստան. տնային տնտեսու-
թյունների եկամուտները, ծախսերը և հիմական սննդամթերքի սպառումը
2009թ., 2010թ., 2014թ., 2017թ., 2018 թ., 2019թ., 2020թ., էջ 88-96, 114-124,
104-113, 114-124, 127-137, 123-134, 115-126,
http://armstat.am/file/article/poverty_2009a_4.pdf,
http://armstat.am/file/article/poverty_2010a_4.pdf,
http://armstat.am/file/article/6.poverty_2014a_3.pdf,
http://armstat.am/file/article/poverty_2016a_3.pdf,
http://armstat.am/file/article/poverty_2017_a_3.pdf,
https://www.armstat.am/file/article/poverty_2018_a_3.pdf,
https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_3.pdf
https://www.armstat.am/file/article/poverty_2020_a_3.pdf :

2019 թվականին 2005 թվականի համեմատ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով ավելացել են 45127 դրամով, նույն ժամանակահատվածում ավելացել են նաև սպառողական ծախսերն ու զուտ տրանսֆերտները, համապատասխանաբար՝ 26215 դրամով և 5302 դրամով (գծապատկեր 3.2.4): Հատկանշական են 2008 թվականին արձանագրված արդյունքները, որտեղ սպառողական ծախսերը կազմել են 28878 դրամ, իսկ դրամական եկամուտները՝ 26866 դրամ, այսինքն՝ 2008 թվականին սպառողական ծախսերը 2012 դրամով գերազանցել են դրամական եկամուտները:


2019 թվականին 2017 թվականի համեմատ սպառողական ծախսերն ավելացել են 1536 դրամով, զուտ տրանսֆերտները՝ 1266 դրամով, սակայն արձանագրվել է դրամական եկամուտների ոչ էական փոփոխություն: Այդ միտումն ապագայում կարող է բերել բնակչության դրամական եկամուտների նվազման, սակայն սպառողական ծախսերի ավելացման:



Գծապատկեր 3.2.5. 2004-2019թթ. հարկային բեռի դինամիկան ՀՀ-ում (%)⁸²

⁸² ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ. «Հայաստանի ազգային հաշիվներ», «Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշներ», էջ 27, 35


Հարկային բեռը Հայաստանի Հանրապետությունում գտնվում է 20.2% շրջանակներում (գծապատկեր 3.2.5): Ինքնին հարկային բեռի մակարդակը ցածր է, որն իր հետևանքների մեջ կարող է ունենալ երկակի ազդեցություն. առաջին հերթին դա նպաստում է գործարար միջավայրի ակտիվության բարձրացմանը, սակայն մյուս կողմից բացասաբար կանդրադառնա պետության եկամուտների համալրման վրա, որի 80%-ից ավելին կազմում են հարկային եկամուտները (գծապատկեր 3.2.6):



Գծապատկեր 3.2.6. 2004-2019թթ. ՀՀ-ի հարկային եկամուտների տեսակարար կշիռը պետական բյուջեում (%)⁸³

http://armstat.am/file/article/hah_14_2+.pdf,
http://armstat.am/file/article/hah_17_2.pdf,
<https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99520963.pdf> ՀՀ Կենտրոնական բանկ՝
<https://www.cba.am/am/SitePages/stat/realsector.aspx>, Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն՝
<http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsFIY2017>:
⁸³ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրատարակումներ. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» 2017թ., 2016թ., 2014թ., 2012թ., 2013թ., 2010թ., 2007թ., 2005թ., էջ 69, 65, 66, 71, 64, 61, 60, 62
http://www.armstat.am/file/article/sv_11_17a_211.pdf,
http://www.armstat.am/file/article/sv_11_16a_211.pdf,
http://www.armstat.am/file/article/sv_11_14a_211.pdf,

Չարգացած տնտեսություն ունեցող երկրներում հարկային բեռը բավականին բարձր է, սակայն դա չի նշանակում, որ այդ երկրներում բիզնեսը չի զարգանում, ավելին՝ այստեղ կա բարձր զարգացած կորպորատիվ մշակույթ, և գործարարությամբ զբաղվելն ավելի դյուրին է: Այդ է արձանագրում 2020 թվականին «Գործարարությամբ զբաղվել» վարկանիշը (գծապատկեր 3.2.7), համաձայն որի՝ բարձր դիրքերում են Նորվեգիան (9) և Մերձբալթյան երկրները (Լիտվա՝ 11, Էստոնիա՝ 18, Լատվիա՝ 19):



Գծապատկեր 3.2.7. Չարգացած և հետանցումային երկրների «Գործարարությամբ զբաղվել» վարկանիշը 2020 թվականին ⁸⁴

http://www.armstat.am/file/article/sv_11_12a_211.pdf,

www.armstat.am/file/article/sv_11_13a_211.pdf,

www.armstat.am/file/article/sv_11_10a_211.pdf,

www.armstat.am/file/article/sv_11_05a_211.pdf,

http://www.armstat.am/file/article/sv_11_07a_211.pdf:

⁸⁴ Հիմք են ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» զեկույցի տվյալները, 2020 թվական՝

<https://documents1.worldbank.org/curated/en/688761571934946384/pdf/Doing-Business-2020-Comparing-Business-Regulation-in-190-Economies.pdf> :

Ինչպես վկայում են աղյուսակ 3.2.1-ի տվյալները, 2015-2019թթ. Նորվեգիայում հարկային բեռի միջին մակարդակը կազմել է 38.5%, իսկ Լատվիայում և Էստոնիայում համապատասխանաբար՝ 32.9% և 48.8%, այսինքն՝ այս երկրներում հարկային բեռի մակարդակը հասնում է 40%-ի Լաֆֆերի կորի կրիտիկական կետի սահմաններում, բայց այդ երկրներում հաջողությամբ լուծվում են այնպիսի սոցիալական խնդիրներ, ինչպիսիք են՝ անվճար կրթությունը, անվճար ապահովագրությունը և այլն:

Աղյուսակ 3.2.1

2004-2019թթ. հարկային բեռը զարգացած և հետանցումային երկրներում (%)⁸⁵


	Լատվիա	Լիտվա	Էստոնիա	Ֆրանսիա	Նորվեգիա	Ռուսաստան	Վրաստան
2004	28.0	50.2	35.0	44.0	37.0	51.0	38.2
2005	28.0	51.2	36.0	44.0	37.0	52.1	38.1
2006	29.0	47.6	37.0	45.0	37.0	51.2	38.4
2007	29.0	46.2	37.0	44.0	39.0	51.1	38.6
2008	28.0	45.6	33.0	44.0	39.0	51.2	38.6
2009	28.0	43.6	31.0	44.0	39.0	48.3	15.3
2010	29.0	45.1	32.0	44.0	37.0	48.3	15.3
2011	29.0	43.1	32.0	45.0	37.0	46.5	16.5
2012	29.0	43	33.0	46.0	38.0	46.9	16.5
2013	30.0	42.9	48.7	47.0	38.0	54.1	16.5
2014	30.0	42.4	49.4	48.0	38.0	48.7	16.4
2015	31.0	42.6	49.4	48.0	39.0	48.9	16.4
2016	32.0	42.6	48.7	48.0	39.0	47.4	16.3
2017	35.9	42.7	48.7	49.0	37.5	47.5	16.4
2018	35.6	40.0	48.1	48.0	37.2	47.1	16.2
2019	35.2	41.2	48.0	41.0	38.2	47.0	16.5

⁸⁵ [http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Total tax revenue by country, 1995-2016 \(%25 of GDP\).png](http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Total_tax_revenue_by_country,_1995-2016_(%25_of_GDP).png), Համաշխարհային բանկ՝ <https://data.worldbank.org>:

Այսպիսով, հետանցումային երկրներում, մասնավորապես ՀՀ-ում, անհրաժեշտ է իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, որոնց նպատակը պետք է լինի տնտեսության այնպիսի որակական ցուցանիշների աճը, ինչպիսիք են՝ բնակչության կենսամակարդակը, զբաղվածության, եկամուտների աճը, տնտեսական ակտիվության բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության բարեփոխման գերակայություններից են ֆինանսական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները, և քանի դեռ ՀՀ-ում ֆինանսական հատվածը չի ստեղծում «երկարաժամկետ փողեր», որոնք կդիվերսիֆիկացվեն ցածր շահութաբեր ոլորտներում և կապահովեն զբաղվածության աճ, այդքանով տնտեսության զարգացումը տեղի կունենա անհամաչափ, ուստի առաջարկվում է անցնել տնտեսության կոնկրետ ոլորտներն, որոնք, այսպես ասած, «ոչ շահութաբեր» են կամ ցածր շահութաբեր են, սակայն ապահովում են զբաղվածության աճ: Մասնավորապես այնպիսի բարձր ավելացված արժեք ունեցող ոլորտ, ինչպիսին գյուղատնտեսությունն է: Չարգացնելով այդ ոլորտում զբաղվածության մակարդակը՝ լուծվում է կարևորագույն խնդիրներից մեկը, այն է՝ ունիվերսալ զբաղվածություն, ինչպես նաև ապահովում է արտահանման կառուցվածքում բարձր ավելացված արժեք ունեցող ոլորտներ: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը ԵՏՄ-ի անդամ է, պետք է շուկայում գտնել այնպիսի խորշեր, որոնք համեմատական առավելությունների մասով եժան է արտադրել Հայաստանում, մասնավորապես գյուղմթերքի վերամշակումը, տեքստիլ, վերամշակող արդյունաբերությունը և այլն: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ստորև կատարվող վերլուծությունը:


Տնտեսության տարբեր ոլորտների զբաղվածության ընդհանուր մակարդակի և կանանց ու տղամարդկանց զբաղվածության մակարդակների փոփոխության վերաբերյալ պատկերացումներ են տալիս 3.2.8, 3.2.9, 3.2.10 գծապատկերները:



Գծապատկեր 3.2.8. 2004-2019թթ. զբաղվածության մակարդակի ըստ տնտեսական գործունեության տեսակների (%)⁸⁶

2004-2019թթ. զբաղվածության մակարդակը հատկապես բարձր է գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտներում՝ միջինը կազմելով 40.75% և 28.77%:

⁸⁶ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2009թ., 2010թ., 2012թ., 2017թ., 2018թ., 2020թ., «Զբաղվածություն», էջ 58, 59, 63, 64, 63, 67, 68, 83, 84 , <http://www.armstat.am/file/doc/99458063.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99461553.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99471438.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99504348.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99510748.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99521073.pdf> :




Գծապատկեր 3.2.9. 2004-2019թթ. կանանց զբաղվածության մակարդակն ըստ տնտեսական գործունեության տեսակների (%)⁸⁷

2019 թվականին 2018 թվականի համեմատ կանանց զբաղվածության մակարդակն ավելացել է արդյունաբերության (3.2%-ով) և առևտրի (13.2%-ով) ոլորտներում, իսկ երկու ոլորտներում արձանագրվել է անկում. գյուղատնտեսության ոլորտում կանանց զբաղվածության մակարդակը նվազել է 15.6%-ով, ծառայության ոլորտում՝ 14,5%-ով:

⁸⁷ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2009թ., 2010թ., 2012թ., 2017թ., 2018թ., 2020թ., «Զբաղվածություն», էջ 58, 59, 63, 64, 63, 67, 68, 87, 88:

<http://www.armstat.am/file/doc/99458063.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99461553.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99471438.pdf>,
<http://www.armstat.am/file/doc/99504348.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99510748.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99521073.pdf>:



Գծապատկեր 3.2.10. 2004-2019թթ. տղամարդկանց զբաղվածության մակարդակն ըստ տնտեսական գործունեության տեսակների (%)⁸⁸


Տղամարդկանց զբաղվածության մակարդակն ավելացել է արդյունաբերության և առևտրի ոլորտներում՝ 7.6%-ով և 11.1 տոկոսով, իսկ երկու ոլորտներում արձանագրվել է անկում՝ գյուղատնտեսության (15.8%-ով) և ծառայությունների (12,1%-ով) ոլորտներում:

Բերված աղյուսակների համեմատական վերլուծության արդյունքում կարող ենք ընդհանրացնել, որ և կանանց, և տղամարդկանց զբաղվածության մակարդակները բարձր են գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտում: Առա-

⁸⁸ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2009թ., 2010թ., 2012թ., 2017թ., 2018թ., 2020թ., «Զբաղվածություն», էջ 60, 61, 64, 65, 64, 65, 68, 69, 85, 86 <http://www.armstat.am/file/doc/99458063.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99461553.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99471438.pdf>, <http://www.armstat.am/file/doc/99504348.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99510748.pdf>, <https://www.armstat.am/file/doc/99521073.pdf> :

ջարկվում է հարկային արտոնություններ տալ հատկապես այդ ոլորտներին որպես բնակչության համար սոցիալական նշանակության ոլորտների:

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից մեկը ինչպես զբաղվածության, այնպես էլ տնտեսական ակտիվության մակարդակն է: Հարկ է նկատել, որ գոյություն ունի որոշակի կապ բնակչության զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների միջև, ինչպես երևում է գծապատկեր 3.2.11-ից: Վերջինս ցույց է տալիս, թե՛ ըստ տարիների, 2004 թվականից սկսած, ինչ փոփոխությունների է ենթարկվել զբաղվածություն-տնտեսական ակտիվություն կապը:



Գծապատկեր 3.2.11. 2004-2017 թթ. զբաղվածության, տնտեսական ակտիվության մակարդակների շարժընթացը ՀՀ-ում (%)⁸⁹

⁸⁹ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., «Զբաղվածություն», էջ 50, 53, 51, 51 <http://armstat.am/file/doc/474.pdf>, <http://armstat.am/file/doc/99461553.pdf>, <http://armstat.am/file/doc/99493603.pdf> <http://armstat.am/file/doc/99504348.pdf> : Հրապարակումներ. «Հայաստանի»

Զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակների կանխատեսման նպատակով կիրառվել է MAX-MIN մեթոդը⁹⁰:

MAX-MIN մեթոդը կիրառելու նպատակով զբաղվածության և տնտեսական ակտիվության մակարդակներից ընտրվել են առավելագույն և նվազագույն ցուցանիշները, զբաղվածության մակարդակի առավելագույն արժեքը՝ 53.2%, նվազագույնը՝ 48.1%, տնտեսական ակտիվության մակարդակի առավելագույն արժեքը՝ 63.4%, նվազագույնը՝ 54.5% (աղյուսակ 3.2.2): Հաշվարկվել է վերջիններիս տարբերությունը, այնուհետև հարաբերությունները:

MAX-MIN մեթոդն արտացոլվել է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$Y = a + bx \quad (3.2.1)$$

որտեղ՝

Y- զբաղվածության մակարդակ (%)

X- տնտեսական ակտիվության մակարդակ (%)

a- հաստատուն մեծություն

b- փոփոխական(լրացուցիչ) մեծություն

Կիրառելով MAX-MIN մեթոդը՝ հաշվարկվել է b-ն (փոփոխական մեծությունը)՝ 1.7%: Այսինքն՝ տնտեսական ակտիվության մակարդակի մեկ տոկոսային փոփոխությունը կարող է բերել զբաղվածության մակարդակի 1.7 տոկոսային կետի ավելացման: Ըստ այդ (3.2.1) բանաձևի՝ դուրս է բերվել a-ն (հաստատուն մեծություն)՝ 27.04% ($a = 63.4 - (53.2 * 1.7) = 27.04$), այ-

Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականին» էջ 48
https://www.armstat.am/file/article/sv_11_17a_141.pdf:

⁹⁰ Կյուրեղյան Ա. Մ. ՀՀ սոցիալ-տնտեսական գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունների համատեքստում, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Գիտական հոդվածների ժողովածու, մաս 1, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2018թ., էջ 108:

սինքն՝ տնտեսական ակտիվության մակարդակի լրացուցիչ 1.7% ավելացումը կարող է բերել զբաղվածության մակարդակի 27.04 տոկոսային կետի ավելացման, այսինքն՝ տնտեսական ակտիվության մակարդակի հետագա բարձրացումը կբերի բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման:

Աղյուսակ 3.2.2

2004-2017թթ. զբաղվածության, տնտեսական ակտիվության մակարդակների շարժնթացը ՀՀ-ում (%) ⁹¹


	Զբաղվածության մակարդակ	Տնտեսական ակտիվության մակարդակ
2004	53	58.6
2005	53	57.7
2006	51.7	55.9
2007	50.7	54.5
2008	49.8	59.5
2009	48.1	59.2
2010	49.6	61.2
2011	51.4	63
2012	51.9	62.7
2013	53.2	63.4
2014	52	63.1
2015	50.9	62.5
2016	50.3	61.6
2017	50.5	61.5

⁹¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., «Զբաղվածություն», էջ 50, 53, 51, 51 <http://armstat.am/file/doc/474.pdf>, <http://armstat.am/file/doc/99461553.pdf>, <http://armstat.am/file/doc/99493603.pdf>, <http://armstat.am/file/doc/99504348.pdf>: Հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականին» էջ 48 https://www.armstat.am/file/article/sv_11_17a_141.pdf:

Հեղինակներն աճի և նվազման տարբեր շարժընթացներ են արձանագրել 2004-2017թթ. տնտեսական ակտիվության մակարդակի և հարկային բեռի փոխազդեցության միջև:

2004-2008թթ. տնտեսական ակտիվության մակարդակը միջինում կազմել է 57.24%, իսկ հարկային բեռը միջինում կազմել է 14.86%, հետևաբար՝ 2 ցուցանիշների միջև տարբերությունը միջինում եղել է 42.3% (գծապատկեր 3.2.12):

2008-2010թթ. տնտեսական ակտիվության մակարդակը միջինում կազմել է 59.96%, միաժամանակ հարկային բեռը 16.8%, հետևաբար ՏԱՑ-ի և հարկային բեռի միջև տարբերությունը կազմում է 43.09%:



Գծապատկեր 3.2.12. 2004-2019թթ. հարկային բեռի և տնտեսական ակտիվության մակարդակի շարժընթացը ՀՀ-ում (%)⁹²

⁹² ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 2006թ., 2010թ., 2015թ., 2017թ., 2020թ., «Զբաղվածություն», էջ 50, 53, 51, 51 <http://armstat.am/file/doc/474.pdf>, <http://armstat.am/file/doc/99461553.pdf>, <http://armstat.am/file/doc/99493603.pdf>, <http://armstat.am/file/doc/99504348.pdf> https://www.armstat.am/file/article/sv_11_17a_141.pdf https://www.armstat.am/file/article/sv_02_19a_141.pdf; Հայաստանի Հանրա-

2016-2019թթ. տնտեսական ակտիվության մակարդակը միջինում կազմել է 62.2%, իսկ հարկային բեռը՝ 22.1%, ուստի տարբերությունը միջինում եղել է 40.1%: Կարող ենք եզրակացնել, որ տնտեսական ակտիվության մակարդակի և հարկային բեռի միջև եղած տարբերության լազը մեծ է, այսինքն՝ այս ցուցանիշների աճի կամ նվազման շարժընթացները միմյանց չեն համապատասխանում:

3.3. Տնտեսության զարգացման և գործարար միջավայրի բարելավման գերակայությունները ՀՀ-ում. հազուստի արտադրության ոլորտի օրինակով

Հազուստի արդյունաբերության ոլորտը թեև ներկայումս բավարար չափով մրցունակ չէ, սակայն եթե հաշվի ենք առնում, որ երկրում առկա են բրդի, մետաքսի՝ սեփական արտադրություն հիմնելու նախադրյալներ, գորգագործության, հազուստի, կոշկեղենի արտադրության մեջ հարուստ ավանդույթները, էժան և որակյալ աշխատուժի առկայությունը, ինչպես նաև ԱՊՀ երկրների շուկաներ ազատ մուտքը, հեռանկարային է դառնում ոլորտում արտահանման և արտադրության փոխկապակցված աճի հնարավորությունը⁹³: Վերջին ժամանակներս ոլորտում հայտնված արտերկրյա մի քանի հայտնի ընկերություններ ցույց տվեցին, որ հնարավոր է ռեսուրսներով միջազգայնորեն մրցունակ արտադրանքի թողարկումը: Բացի այդ, տեքստիլ արդյունաբերությունը քիմիական արդյունաբերության հետ փոխկապակցված զարգացնելու պարագայում լայն հնարավորություն է բացվում նաև քիմիական արհես-

պետության հարկային ծառայություն

[http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2017:](http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIY2017)

⁹³ Թորոսյան Թ., Մարգարյան Լ. «Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում», ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ՝ «Տարեգիրք», Ե., 2011թ. էջ 257:

տական մանրաթելերի և դրանցից արտադրանքի արտահանման ծավալների մեծացման համար⁹⁴: Ներկայում նման արտադրանք արտահանվում է, սակայն չնչին ծավալներով (ընդհանուրի 0.1%-ը), բացի այդ զուգահեռաբար կարելի է սկսել Համաշխարհային շուկայում այս ոլորտի համեմատաբար նոր ճյուղի զարգացումը՝ չիրկիզվող պոլիմերային նյութերի և կտորների արտադրություն, որոնք օգտագործվում են մեքենաների, ինքնաթիռների, նավերի ներքին սրահների երեսպատման, հյուրանոցների, դպրոցների և այլ կառույցների շինարարության, ինչպես նաև վարագույրների, գորգերի արտադրության մեջ⁹⁵: Նկատենք, որ այս նյութերը ներկայում այլ փոխարինիչներ չունեն: Իհարկե, ասվածը ենթադրում է միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացում, քանզի անհրաժեշտ է նորարարական մոտեցում ցուցաբերել և առաջին հերթին մշակել նման նյութերի արտադրության արդյունավետ տեխնոլոգիա⁹⁶: Համաշխարհային տնտեսության մեջ նման նյութերի պահանջարկը բավականին զգալի է: Տեքստիլ արդյունաբերության մեջ նորարարության ներդրման պարագայում կարելի է մտածել նաև Հայաստանում տեխնիկական տեքստիլի արտադրություն սկսելու մասին, որը կնպաստի ոչ միայն ՀՀ արտահանման աճի հնարավորությանը, այլ նաև տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը (տեխնիկական տեքստիլն օգտագործվում է բժշկության, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտներում)⁹⁷:


⁹⁴ Թորոսյան Թ., Մարգարյան Լ. Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, «Տարեգիրք», Ե., 2011թ., էջ 261:

⁹⁵ Թորոսյան Թ., Մարգարյան Լ. Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, «Տարեգիրք», Ե., 2011թ., էջ 261, 262:

⁹⁶ Թորոսյան Թ., Մարգարյան Լ. Արտահանման հնարավորությունների ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ, «Տարեգիրք», Ե., 2011թ. էջ 262:

⁹⁷ Նույն տեղում:


Զարգացող այն երկրներում, որոնք արտահանման միջոցով մեծացրել են համաշխարհային տնտեսությանն ինտեգրման աստիճանը, առավել բարձր տեմպերի է հասել հազուստի արտադրության համախառն ավելացված արժեք/ՀՆԱ ցուցանիշը. վերջինս բարձր է Չինաստանում, Թուրքիայում, ինչպես նաև Բելառուսում, Ռուսաստանում: 2019 թվականին 2004 թվականի համեմատ հազուստի արտադրության համախառն ավելացված արժեք/ՀՆԱ ցուցանիշը (տե՛ս գծապատկեր 3.3.1) Չինաստանում և Թուրքիայում ավելացել է՝ 8.15% և 3.55%, իսկ Ռուսաստանում և Ուկրաինայում արձանագրվել է անկում՝ 21.6% և 40.5%, Հայաստանում նվազել է 24.2%, սակայն Ղրղզստանում էական փոփոխություն չի արձանագրվել՝ կազմելով 15.1%:



Գծապատկեր 3.3.1. 2004-2019թթ. Չինաստանի, Թուրքիայի, Ուկրաինայի և ԵԱՏՄ անդամ-երկրների հազուստի արտադրության համախառն ավելացված արժեք/ՀՆԱ ցուցանիշի շարժընթացը (%)⁹⁸

⁹⁸ Համաշխարհային բանկ <https://data.worldbank.org/indicator/NV.IND.MANF.ZS>:


2019 թվականին նախորդ տարվա համեմատ հազուստի արտադրության համախառն ավելացված արժեք/ՀՆԱ ցուցանիշը Բելառուսում և Չինաստանում ավելացել է 10.4 և 1.7 տոկոսով, Թուրքիայում՝ 6 տոկոսով, Ռուսաստանում և Ղազախստանում այս ցուցանիշը նվազել է 0.5 և 1.7 տոկոսով, սակայն Հայաստանում և Ղրղրզստանում կական փոփոխությունն չի արձանագրվել կազմելով 10.2 և 15.1%: Հայաստանն այս ցուցանիշով զբաղեցնում է կայուն չորրորդ տեղը՝ զիջելով Բելառուսին, Ղրղրզստանին և Ռուսաստանին:



Գծապատկեր 3.3.2. 2010-2018թթ. հարկային բեռը, միջին անվանական աշխատավարձը և զբաղվածների միջին թվաքանակը հազուստի արտադրության ոլորտում⁹⁹

⁹⁹ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր «Արդյունաբերություն» 2012թ., 2013թ., 2015թ., 2017թ., 2018թ., 2020թ., էջ 272, 267, 272, 276, 266
<http://armstat.am/file/doc/99477348.pdf>, <http://armstat.am/file/doc/99493648.pdf>
<http://armstat.am/file/doc/99504393.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99516788.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99474793.pdf>,
<https://www.armstat.am/file/doc/99520938.pdf>,
 հրապարակումներ՝ «Աշխատանքի շուկան ՀՀ-ում» 2009-2013թթ., 2016 թ.,

Ինչպես ցույց են տալիս զծապատկեր 3.3.2-ի տվյալները (վերլուծությունն իրականացվել է ճգնաժամից հետո), 2018 թվականին 2010 թվականի համեմատ հազուստի արտադրության ոլորտում զբաղվածների միջին տարեկան թվաքանակն ավելացել է 4700 մարդով, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը՝ 34217 դրամով, նույն ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումներն այդ ոլորտում ավելացել են 602.3 մլն դրամով, որի համար պատճառ է հանդիսացել վարկավորման տոկոսադրույքի 23.80%-ի կրճատումը (զծապատկեր 3.3.3):



Գծապատկեր 3.3.3. 2010-2018թթ. վարկային տոկոսադրույքի և օտարերկրյա ներդրումների շարժընթացը ՀՀ-ում¹⁰⁰

2017թ., 2018թ., 2020թ., էջ 187, 191, 224, 273

http://armstat.am/file/article/trud_14_14.pdf, http://armstat.am/file/article/20_trud_2016_13.pdf, http://armstat.am/file/article/trud_2017_14.pdf, https://www.armstat.am/file/article/trud_18_14.pdf, https://www.armstat.am/file/article/trud_2020_14.pdf :

¹⁰⁰ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-փետրվար» 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2017թ., 2018թ., էջ 87, 85, 93, 92, 89, 98
http://armstat.am/file/article/sv_02_12a_420.pdf,

2018 թվականին նախորդ տարվա համեմատ հագուստի արտադրության ոլորտում զբաղվածների միջին տարեկան թվաքանակը և միջին ամսական անվանական աշխատավարձի մակարդակն ավելացել են, համապատասխանաբար՝ 1900 մարդով և 1191 դրամով, իսկ հարկային բեռի ցուցանիշը մնացել է անփոփոխ, սակայն միաժամանակ նվազել է վարկավորման տոկոսադրույքը՝ 15.2 տոկոսով, որը հանգեցրել է այդ ոլորտում օտարերկրյա ներդրումների ավելացման՝ 203.1 մլն դրամով:

Դա վկայում է այն մասին, որ ոլորտում օտարերկրյա ներդրումների խթանման համար անհրաժեշտ է նվազեցնել վարկային տոկոսադրույքը, ինչպես նաև այս ոլորտով զբաղվող ընկերություններին տալ որոշակի հարկային արտոնություններ: Դա կնպաստի լուծել գործազրկության խնդիրը, էժան աշխատուժի հաշվին խթանել արտահանումը և ներմուծել այնպիսի ապրանք, որի արտադրությունը թանկ է բոլորից, այսինքն՝ պետք է իրականացնել արտապատվիրման քաղաքականություն:

Անդրադառնալով՝ ըստ ապրանքային խմբերի (դիտարկվել են 50-65 ապրանքախմբերը), ՀՀ-ի հագուստի ոլորտի արտահանմանը՝ հարկ է նշել, որ 2008-2010թթ. այս ոլորտում նշանակալից չափով արտահանվել է միջինում տրիկոտաժե հագուստ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածքով (446.9 մլն դրամ), տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով (464.4 մլն դրամ) և կոշիկ, զուգազույպաներ (349.7 մլն դրամ) ապրանքախմբերից (աղյուսակ 3.3.1): Նույն ժամանակահատվածում հիմնականում ներմուծվել են բամբակի,

http://armstat.am/file/article/sv_02_13a_420.pdf,

http://armstat.am/file/article/sv_02_14a_420.pdf,

http://armstat.am/file/article/sv_02_16a_420.pdf,

http://armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf,

https://www.armstat.am/file/article/sv_02_18a_420.pdf,

<https://www.cba.am/am/sitepages/default.aspx>:

տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածքով միջինում 1241.3 մլն դրամի և 2857.7 մլն դրամի, կոշիկի ապրանքատեսակներ՝ 3973.5 մլն դրամի (աղյուսակ 3.3.2): Տրիկոտաժե հագուստ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածք, ապրանքատեսակի ներմուծումը 2410.8 մլն դրամով գերազանցում է արտահանմանը:

2014-2018թթ. հիմնականում արտահանվել են տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից և կոշիկ, զուգագուլպաներ միջինում 35634.3 մլն դրամի և 830.8 մլն դրամի, տրիկոտաժե հագուստ մեքենայական կամ ձեռքի գործվածքով ապրանքախմբեր միջինում՝ 8207.2 մլն դրամի, հետևաբար՝ դիտարկված ժամանակահատվածը 2008-2010թթ. համեմատ տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքի ապրանքատեսակի գծով արտահանումն էական ավելացել է 35169.9 մլն դրամով:

Հարկ է նշել, որ նույն ժամանակահատվածում հիմնականում ներմուծվել են տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից (28764.5 մլն դրամ), տրիկոտաժե հագուստ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածքով (20340.5 մլն դրամ), և կոշիկ, զուգագուլպաներ (15984.4 մլն դրամ), ապրանքախմբերը, ուստի տրիկոտաժե հագուստ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածք, և կոշիկ, զուգագուլպաներ ապրանքախմբերի ներմուծումը 12133.3 մլն դրամով և 15153.6 մլն դրամով գերազանցում է այս ապրանքախմբերի գծով արտահանմանը, սակայն տրիկոտաժե հագուստի, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից, ներմուծումն ավելի քիչ է, քան արտահանումը (6869.8 մլն դրամով):

2008-2018թթ. ՀՀ-ի արտահանումն ըստ ապրանքային խմբերի (մլն դրամ)¹⁰¹

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Մետաքս	-	-	1.0	-	-	-	-	-	1.5	0.7	0.6
Բուրդ	45.9	10.7	1.4	23.7	0.4	-	0.1	-	-	5.1	-
Բամբակ	12.9	13.8	3.6	87.7	26.0	67.2	3.0	18.6	309.1	997.1	999.3
Այլ բուսական մանածագործական գործվածք	1.4	-	0.3	-	-	3.4	-	10.7	-	1.1	1.1
Քիմիական թելեր	43.5	11.6	22.7	41.6	7.9	47.0	-	19.7	82.7	1441.8	1521.3
Քիմիական գործվածք	33.4	31.5	44.1	3.7	64.7	23.0	26.0	0.5	53.2	893.6	689.2
Բամբակ, հատուկ գործվածք, ճուպան	12.2	4.2	279.9	25.4	12.3	15.6	93.3	80.2	111.6	226.6	226
Գորգեր և հատակի այլ ծածկոցներ	7.8	3.6	54.7	38.7	76.6	95.5	69.2	42.9	215.7	247.4	250.3

97

¹⁰¹ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ՝ «Արտաքին տնտեսական գործունեություն, ըստ արտաքին գործունեության ապրանքային անվանացանկի 2-նիշ դասակարգման» 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ., 2018թ., էջ 53, 51-52, 49-50, 40, 49-50, 49-50, 50-51, 50-51, 50-51, 29-30
http://armstat.am/file/article/ft_2nish_08_10.pdf, http://armstat.am/file/article/ft_2nish_09_10.pdf,
http://armstat.am/file/article/ft_2nish_10_8.pdf, http://armstat.am/file/article/ft_2nish_11_10.pdf,
http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf, http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf,
http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf, http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_9.pdf,
http://armstat.am/file/article/ft_2_nish_2017_10.pdf, https://www.armstat.am/file/article/ft_2_nish_2018_10.pdf:

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ	51.7	1.8	0.2	9.0	1.8	1.3	1.3	0.3	17.7	292.4	321.2
Տեքստիլ, կրկնագործված իրեր	0.7	2.4	26.2	4.3	0.2	2.3	-	0.5	39.3	357.5	359.2
Տրիկոտաժե պաստառ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	72.6	63.0	0.7	15.1	4.6	-	-	39.7	757.3	434.6	452.2
Տրիկոտաժե հագուստ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	406.9	311.2	622.6	607.7	1284.8	1882.4	1041.4	3032.9	7796.3	14044.5	15121.2
Տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից	86.3	62.8	1244.3	2085.7	6094.2	13629.7	19464.3	29359.4	36830.9	46195.9	46321.0
Կոշիկ, զուգազուլպաներ	270.6	276.9	501.8	544.3	910.1	886.9	650.1	574.4	1039.3	946.3	944.2
Գլխարկներ և դրանց մասեր	97.6	28.2	9.5	5.5	26.3	8.9	11.4	136.9	106.2	360.3	670.2

2008-2018թթ. ՀՀ-ի ներմուծումն ըստ ապրանքային խմբերի (մլն դրամ)¹⁰²

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Մետաքս	0.7	0.6	4.9	19.5	8.9	12.4	13.6	9.4	14.1	27.8	27.1
Բուրդ	162.4	299.2	188.0	288.8	327.6	314.1	261.1	749.4	263	410.5	410
Բամբակ	309.1	201.8	3213.1	5076.9	3961.4	4310.6	4594.3	4763.9	6465	11156.5	1156
Այլ բուսական մանածագործական գործվածքներ	3.3	0.3	80.0	43.8	42.8	45.1	138.1	91.7	140.6	342.6	420.1
Քիմիական թելեր	26.7	40.9	3355.6	5621.8	5475.1	6652.1	7473.7	7176.0	9646.6	11598.2	11601.2
Քիմիական գործվածք	120.8	75.6	2566.3	4836.8	6268.9	7030.9	9948.2	17077.0	22471.3	14075.7	14052.3
Բամբակ, հատուկ գործվածք, ճոպան	28.8	37.0	866.6	1126.9	1320.2	1597.4	1908.8	1873.0	2835.8	3075.0	4012.3

¹⁰² ՀՀ վիճակագրական կոմիտե, հրատարակումներ՝ «Արտաքին տնտեսական գործունեություն» 2009թ., 2010թ., 2011թ., 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ., 2018թ., էջ 53, 51-52, 49-50, 40, 49-50, 49-50, 50-51, 50-51, 50-51, 29-30
http://armstat.am/file/article/ft_2nish_08_10.pdf, http://armstat.am/file/article/ft_2nish_09_10.pdf,
http://armstat.am/file/article/ft_2nish_10_8.pdf, http://armstat.am/file/article/ft_2nish_11_10.pdf,
http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf, http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf,
http://armstat.am/file/article/ft_2nish_12_10.pdf, http://armstat.am/file/article/ft_2_nish_2016_9.pdf,
http://armstat.am/file/article/ft_2_nish_2017_10.pdf, https://www.armstat.am/file/article/ft_2_nish_2018_10.pdf:

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Գորգեր և հատակի այլ ծածկոցներ	83.0	15.3	1462.6	2012.1	2064.9	1970.9	1878.0	894.9	1535.0	1620.6	1620.3
Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ	34.7	7.1	437.8	755.6	901.4	967.4	1243.5	1212.9	1652.2	1888.7	1922.3
Տեքստիլ, կրկնագործված իրեր	54.9	110.4	1047.6	1365.1	1455.6	1217.2	1415.5	1710.7	2368.7	3406.7	3450.3
Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	64.8	31.7	3828.6	4965.7	4938.0	4453.4	3766.1	2776.9	6297.7	8201.9	8301.6
Տրիկոտաժե հագուստ՝ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	175.3	232.9	8165.0	9069.1	11255.4	12454.6	12850.6	15091.3	20229.3	26267.4	27264.1
Տրիկոտաժե հագուստ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքից	162.0	198.5	15090.7	18013.3	17441.3	17879.9	18443.8	21421.4	27848.1	37405.5	38704.1
Կոշիկ, զուգագույպաներ	206.0	205.8	11508.9	11917.8	11347.7	12390.8	12175.3	9749.3	15824.6	20927.9	21245.3
Գլխարկներ և դրանց մասեր	5.8	7.1	226.4	290.6	334.0	300.7	435.8	400.8	531.0	663.9	672.3


Հեղինակները հագուստի ոլորտի զարգացման և այդ ոլորտում ներդրումային ակտիվության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման կարևորության հիմնախնդիր են դիտում Հանրապետության ենթակառուցվածքների զարգացումը, որը հնարավորություն կտա՝

1. կրճատելու գործազրկության մակարդակը, այս ոլորտում ստվերի ծավալները և մրցակցության թերացումները,

2. ավելացնելու զբաղվածության մակարդակը, ապահովելու կայուն պահանջարկ, ավելացնելու այս ոլորտում ավելացված արժեքը, իրականացնելու արտահանում և ներմուծման փոխարինում այս ապրանքի գծով,

3. մեծացնելու միջազգային համագործակցության կապերը, ստեղծելու նոր հարթակներ այս ապրանքների նոր խորշերի գրավման և միջազգային ասպարեզ դուրս գալու՝ հետագայում նաև երկրի վարկանիշը բարձրացնելու առումով:

Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 3.3.4-ի տվյալները (վերլուծությունն իրականացվել է ճգնաժամից հետո), 2018 թվականին 2010 թվականի համեմատ համախառն ներքին արդյունքն ավելացել է 3108827 մլն դրամով, նույն ժամանակահատվածում օտարերկրյա ներդրումներն այդ ոլորտում ավելացել են 602.3 մլն դրամով, հարկային բեռն աճել է 28.6 տոկոսով (գծապատկեր 3.3.5):




Գծապատկեր 3.3.4. 2010-2018թթ. համախառն ներքին արդյունքի և օտարերկրյա ներդրումների շարժընթացը ՀՀ-ում (մլն դրամ)¹⁰³

2018 թվականին 2017 թվականի համեմատ համախառն ներքին արդյունքն ավելացել է 1000129 մլն դրամով, ինչպես նաև հազուստի արտադրության ոլորտում օտարերկրյա ներդրումները՝ 117.7 մլն դրամով: Վերջինիս պատճառ է հանդիսացել հարկային բեռի ցուցանիշի ոչ էական փոփոխու-

¹⁰³ ՀՀ վիճակագրական կոմիտե, հրապարակումներ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-փետրվար» 2012թ., 2013թ., 2014թ., 2015թ., 2017թ., 2018թ., էջ 87, 85, 93, 87, 78, 88, http://armstat.am/file/article/sv_02_12a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_13a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_14a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_15a_420.pdf, http://armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf, https://www.armstat.am/file/article/sv_02_18a_420.pdf, հրապարակումներ՝ «Հայաստանի ազգային հաշիվներ» 2013թ., 2018թ., 2020թ., էջ 23, 35 https://www.armstat.am/file/article/hah_13_2.pdf, https://www.armstat.am/file/article/hah_18_2.pdf, <https://www.armstat.am/file/doc/99520928.pdf>:

թյունը, որը կազմել է 21.34 տոկոս, ուստի հարկային բեռի ցուցանիշի հետագա նվազումը բերում է կապիտալի ներհոսք դեպի այդ ոլորտ, որտեղ տեղի է ունենում կապիտալի «գերաճ», որն էլ կրեթի տնտեսության «ակտիվացման»: Ինքնին ենթադրվում է այս ոլորտով զբաղվող ընկերություններին որոշակի հարկային արտոնություններ տալու անհրաժեշտությունը:




Գծապատկեր 3.3.5. 2010-2018թթ. օտարերկրյա ներդրումների և հարկային բեռի շարժընթացը ՀՀ-ում¹⁰⁴

Այդ է ցուցադրում 2010-2018թթ. դինամիկան: Այսպես, 2018 թվականին 2010 թվականի համեմատ հազուստի ոլորտում օտարերկրյա ներդրումներն ավելացել են 602.3 մլն դրամով, որը բերել է հայրենական արտադրանքի ծավալների ավելացման 11184.4 մլն դրամով, սակայն միաժամանակ հազուստի ոլորտում ներմուծման ծավալները ևս ավելացել են 58619.3 մլն դրամով (գծապատկեր 3.3.6):

¹⁰⁴ Հայաստանի Հանրապետության հարկային ծառայություն
<http://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsT1Y2017>:

2018 թվականին 2017 թվականի համեմատ հագուստի ոլորտում օտարերկրյա ներդրումներն ավելացել են 177.7 մլն դրամ, վերջինիս ավելացումը բերել է տեղական արտադրանքի ավելացման 3223.7 մլն դրամով, սակայն նույն ժամանակահատվածում դրամ/դուլար փոխարժեքային կուրսերի տատանումներն առավել շահեկան են դարձրել Համաշխարհային շուկայից հագուստի ներմուծման ծավալների ավելացումը 20386.5 մլն դրամով:




Գծապատկեր 3.3.6. 2010-2018թթ. հագուստի արտադրության ծավալի, հագուստի ներմուծման ծավալի, օտարերկրյա ներդրումների և փոխարժեքի դինամիկան ՀՀ-ում (մլն դրամ)¹⁰⁵

